

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՉԱՔՅԱՆ ՀՐԱՆՈՒՇ ՍՈՒՐԵՆԻ

**ԿՐԿՆԱՍԵՌՈՒԹՅԱՆ ԻՄԱՍՏԱՅԻՆ-ԳՈՐԾԱՌԱԿԱՆ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

ժ. 02. 01 <<Հայոց լեզու>> մասնագիտությամբ բանասիրական
գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2025

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան
հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Աննա Յենրիկի Աբաջյան

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գայանե Գերասիմի Գևորգյան

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Թերեզա Սարգսի Շահվերդյան

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի՝ Զ. Թումանյանի
անվան պետական համալսարան

Պաշտպանությունը կկայանա 2025 թ. -ի մայիսի 22-ին՝ ժամը 15-ին

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲԿԳԿ-ի՝

Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0015 Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԳԱԱ Հ. Աճառյանի
անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025 թ. -ի ապրիլի 21-ին

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

բ. գ. թ, դոցենտ

Ն. Մ. Սիմոնյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը պայմանավորված է մի շարք գործոններով՝ նախ՝ լեզվական իրողության լիակատար և ամբողջական քննության անհրաժեշտությամբ, որ կատարվում է ինչպես համաժամանակյա, այնպես էլ տարժամանակյա հայեցակետերով և արձանագրում կրկնաստեղծության տարժամանակյա զարգացման առանձնահատկություններով պայմանավորված համակարգային փոփոխությունները: Երկրորդ՝ ներկայումս կրկնաստեղծության հանդեպ հետաքրքրության աճով, բազմաթիվ հոդվածների և մենագրությունների հրատարակությամբ: Առաջադրվող տեսակետները՝ կապված ցեղակից և ոչ ցեղակից լեզուներում կրկնասեռ բայերի թվի, ձևախմբատային օրինաչափությունների շրջանակի և վերջիններիս տարժամանակյա փոփոխությունների հետ, երևան են հանում հայերենի ինքնատիպությունն այս առումով բացահայտող Նոր ուսումնասիրության անհրաժեշտությունը: Այն վկայում է, որ հայերենը շեղվում է ցեղակից լեզուներին բնորոշ ընդհանուր օրինաչափություններից: Խոսքը վերաբերում է կրկնասեռության ընդգրկվածությանը, իմաստային-գործառական դրսևորումներին, վիճակագրական տվյալներին և վերջիններիս տարժամանակյա փոփոխություններին, ուստի արդիական է դառնում հայերենի լեզվական նյութի ոչ միայն նորովի ուսումնասիրության, այլ նաև լուսաբանման հարցը: Երրորդ՝ արդի լեզվաբանական տիպաբանության խնդիրներից մեկի՝ բայական կարգերի՝ տարժամանակյա զարգացման տեսանկյունից կատարված համակարգված ուսումնասիրությունների պակասը հայերենի առումով լրացնելու համեստ փորձով:

Նման դիտվածքով կատարված հետազոտությունն ամբողջացնում է կրկնասեռության գիտական նկարագրությունը և փաստական Նոր նյութեր է տրամադրում հայերենի հետագա ուսումնասիրությունների համար:

Հետազոտության առարկան հայերենի զարգացման երեք շրջանների կրկնասեռության երևույթն է՝ համաժամանակյա և տարժամանակյա հայեցակետերով:

Օգտագործված աղբյուրները: Օգտագործել ենք գիտատեսական համապատասխան գրականություն՝ սկսած հայ քերականության պատմության առաջին շրջանից մինչև արդի փուլի աշխատությունները: Կրկնասեռության տեսական հարցերին անդրադառնալիս նկատի ենք ունեցել ինչպես հայ, այնպես էլ արտասահմանյան հեղինակների՝ թեմային առնչվող աշխատանքներն ու դիտարկումները:

Ատենախոսության նպատակն է գրաբարի, միջին հայերենի, արդի հայերենի լեզվական փաստերի նորովի ուսումնասիրության հիման վրա տալ հայերենի բայական համակարգում կրկնաստեռության պատմական զարգացման, իմաստային-գործառական դրսևորումների հնարավորինս ամբողջական նկարագրությունը՝ ինչպես համաժամանակյա և տարժամանակյա հայեցակետերով, այնպես էլ ցեղակից լեզուների համեմատությամբ:

Սույն հետազոտության նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝

- ի մի բերել կրկնաստեռության շուրջ կատարված ուսումնասիրություններն ու արձանագրած արդյունքները,
- ճշգրտել հայերենի պատմական զարգացման երեք շրջանների կրկնասեռ բայերի ցանկերը՝ ըստ համապատասխան բառարանների, համաբարբառների և բնագրային սկզբնաղբյուրների,
- առանձնացնել հայերենի կրկնասեռ բայերի պատմական ժառանգության (գրաբարյան) հիմնաշերտը՝ այն դիտարկելով որպես համեմատության եզր հայերենի հետագա շրջանների կրկնասեռ բայերի ուսումնասիրության համար,
- ներկայացնել հայերենի կրկնասեռ բայերի ձևափմաստային առանձնահատկությունները, իմաստային-գործառական դրսևորումները՝ ըստ գրաբարյան ժառանգության շերտի և լեզվի զարգացման հետագա փուլերի,
- արձանագրել և մեկնաբանել կրկնասեռ բայերի՝ պատմական զարգացման ընթացքում կրած փոփոխությունները,
- բացահայտել կրկնասեռության ինչպես ձևավորման, այնպես էլ չեզոքացման պատճառակցական հիմքերը,
- հիմնավորել տարժամանակյա կտրվածքում կրկնասեռ բայերի թվի նվազման իրողությունը,
- բացահայտել և ներկայացնել այն առանձնահատկությունները, որոնք կրկնասեռության դրսևորման առումով ցուցաբերում է հայերենը ցեղակից լեզուների համեմատությամբ:

Հետազոտության մեթոդաբանությունը: Խնդրո առարկայի համակողմանի քննությունը կատարվել է հետազոտության հարաբերակցական եղանակով, *համեմատական մեթոդի* տարբեր դրսևորումներով՝ պատմահամեմատական և համեմատական-գուլգադրական մեթոդների գործադրմամբ:

Ատենախոսության գիտական նորույթն ու գործնական նշանակությունը:

- Հայերենի կրկնասեռ բայերն առաջին անգամ են ենթարկվում համակողմանի և ամբողջական քննության, որը կատարվում է

համաժամանակյա և տարժամանակյա հայեցակետերի զուգորդությամբ: Համաժամանակյա կտրվածքում կրկնաստեռությունը բնորոշվում է տվյալ լեզվափոփոխի հատուկ բնութագրական գծերով, իսկ տարժամանակյա կտրվածքում մեկնաբանվում է պատմական փոփոխությունների համատեքստում:

- Գրաբարի, միջին հայերենի, արդի հայերենի կրկնաստեռ բայերի զուգադրական քննությունը ներկայացվում է համապատասխան վիճակագրությամբ, որը հնարավորություն է տալիս տեսնելու կրկնաստեռության ձևախմաստային և ոճական-գործառական դրսևորումների պատմական զարգացումը և կրած տարժամանակյա փոփոխությունները:
- Հայ քերականագիտության մեջ կրկնաստեռությունն ավանդաբար կապվել է սեռային տեղաշարժերի հետ, իսկ մենք հիմնավորում ենք կրկնաստեռության երկու տեսակների գոյությունը՝ պայմանավորած սեռային տեղաշարժերով և սկզբնաձևային վիճակով, կրկնաստեռության ոչ միայն տարժամանակյա, այլև համաժամանակյա կտրվածքում ձևավորվելու և չեզոքանալու հավանականությունը, որն ակնհայտ դրսևորում ունի արդի լեզվավիճակում՝ ժամանակակից արևելահայերենում:
- Հայերենի կրկնաստեռ բայերը դասակարգվում են ըստ ծագման աղբյուրների: Առանձնացվում է հայերենի կրկնաստեռ բայերի պատմական ժառանգության շերտը (ի դեմս դասական գրաբարի կրկնաստեռ բայերի), որը դառնում է համեմատության եզր հայերենի զարգացման մյուս շրջանների՝ խնդրո առարկա բայերի համար:
- Առանձին քննության առարկա են դառնում հայերենի զարգացման յուրաքանչյուր շրջանի կրկնաստեռ բայերի համաժամանակյա և տարժամանակյա շերտերը՝ դրանց ձևախմաստային և ոճական-գործառական առանձնահատկությունների բացահայտմամբ:
- Կատարված ուսումնասիրությամբ բացահայտվում են բառարաններում չարձանագրված մի խումբ կրկնաստեռ բայեր, մյուս կողմից՝ բառարաններում հիշատակված բազմաթիվ կրկնաստեռ բայեր արդի շրջանում համարվում են հնացած կամ հնացող (ըստ արևելահայերենի ազգային կորպուսի տվյալների) և չեն գետնվում համապատասխան ցանկերում:
- Փորձ է արվում պարզելու՝ կրկնաստեռության ձևավորումը բխում է լեզվի զարգացման ներքի՞ն օրինաչափություններից, թե՞ կան նաև արտաքին գործոններ, ինչ դեր են ունեցել օտար լեզվական ազդեցությունները, մասնավորապես՝ հին հունարենը՝ գրաբարի և ռուսերենը՝ ժամանակակից արևելահայերենի համար:
- Չուզահեռներ են տարվում հայերենի և ցեղակից լեզուների համատիպ լեզվական իրողությունների միջև՝ հայերենի ինքնատիպությունն այս առումով բացահայտելու և

ներկայացնելու նպատակով:

Ատենախոսության փորձաքննությունը: Հետազոտության արդյունքները գործնականում փորձարկվել են ՇՊՀ հումանիտար գիտությունների (նախկինում ԳՊՄԻ բանասիրական) ֆակուլտետի մագիստրատուրայի կրթական համակարգում. ուսանողները տարիներ շարունակ լսել են «*Կրկնաստեռությունը հայերենի բայական համակարգում*» դասընթացը, որը որոշակիորեն նպաստել է նրանց լեզվական գիտելիքների խորացմանը: Հետազոտության թեմայով հրատարակել ենք երեք մենագրություն: Ուսումնասիրության հիմնադրույթները հողվածների ձևով հրապարակվել են հանրապետության (տասնութ հողված) և արտերկրի (վեց հողված) գիտական պարբերականներում: Կատարված քննության նյութերի հիման վրա կազմել ենք հայերենի կրկնասեռ բայերի՝ մոտ 1000 բայ ընդգրկող առաջին բառարանը՝ բնագրային օրինակներով:

Ուսումնասիրված փաստական նյութը և քննության արդյունքները կարող են կիրառվել հայերենի պատմական քերականությանը և հայոց լեզվի պատմությանը նվիրված ուսումնասիրություններում:

Ատենախոսությունը քննարկվել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում և երաշխավորվել հրապարակային պաշտպանության:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, «Եզրակացություններ» և «Հավելվածներ» բաժիններից, ունի գրականության և համառոտագրությունների ցանկ: Աշխատության ընդհանուր ծավալը համակարգչային շարվածքի 477 էջ է:

Ներածություն: *Հարցի պատմության* անդրադարձն ընդգրկում է հին և նոր՝ հունատիպ, լատինատիպ, ինքնատիպ, աշխարհաբարյան, խորհրդային և արդի շրջանի քերականական աշխատությունների քննությունը: Այն վկայում է, որ բայի սեռը բնութագրվում և ճանաչվում է հայ առաջին քերականների կողմից, սակայն կրկնասեռությունը՝ որպես սեռի քերականական կարգի առանձնահատկություն, գիտական արժևորում է ստանում միայն *խորհրդային շրջանի*, մասնավորապես՝ Ա. Աբրահամյանի և Վ. Առաքելյանի ուսումնասիրություններում: *Կրկնասեռությունը* բնութագրվում է որպես *քերականական տարբեր սեռերի նշանակությունների համատեղում բայական նույն բառույթում՝ առանց ձևական-ձևաբանական փոփոխությունների:* Ա. Աբրահամյանը և Վ. Առաքելյանը կրկնասեռությունը կապում են

միայն ներգործական և չեզոք¹, խնդրո առարկայի այլ ուսումնասիրողներ՝ նաև կրավորական և չեզոք սեռերի նշանակությունների համատեղումների հետ: Իրենց աշխատությունների նպատակից դուրս համարելով հարցի տարժամանակյա ուսումնասիրությունը՝ լեզվաբանները կրկնասեռության դրսևորումը հիմնականում քննում են ժամանակակից արևելահայերենում:

Արդի շրջանում բայի սեռի քերականական կարգի արտահայտության և կրկնասեռության հարցերը հայերենի բարբառներում դիտարկում է Վ. Կատվայանը², հին հայերենի կրկնասեռ բայերի քննությանն անդրադառնում է Գ. Խաչատրյանը³, իմաստաարժեքային պատմական տեղաշարժերը ուսումնասիրության են ենթարկում Էդ. Մկրտչյանը և Լ. Խաչատրյանը⁴, կրկնասեռության տարժամանակյա քննության փորձ է կատարում Տ. Սաֆարյանը⁵: Մենք կրկնասեռության հարցի քննությանն անդրադարձել ենք 2007 թվականին՝ թեկնածուական ատենախոսության շրջանակներում⁶, հրատարակել ենք մենագրություններ և մի շարք հոդվածներ:

2000-ական թվականներին բայի սեռի քերականական կարգի և մասնավորապես կրկնասեռության հանդեպ հետաքրքրությունը նկատելիորեն աճում է: Հրատարակվում են Լ. Կուլիկովի, Ա. Բուկարյովի, Ա. Կիբրիկի, Գ. Ռոզովի, Բ. Լևինի, Մ. Ռոտմբերգի մենագրությունները՝ նվիրված դադատանյան լեզուներում, անգլերենում և ֆրանսերենում սեռի քերականական կարգի և կրկնասեռության դրսևորման առանձնահատկությունների քննությանը: 2009 թ.-ին Սալոնիկ քաղաքում կրկնասեռ բայերի քննության հարցերին նվիրված հատուկ գիտաժողով է հրավիրվում («Typology of labil verbs: Focus on diachrony» խորագրով), որի կյուբերը լույս են տեսնում «Linguistics» գիտական ամսագրի հատուկ համարում: 2013 թ.-ին կրկնասեռության տիպաբանությանը առանձին մենագրությամբ անդրադառնում է ռուս լեզվաբան Ա. Լետուչիյը⁷: Ի թիվս բազմաթիվ լեզվախմբերի և լեզուների (ռոմանական, գերմանական, սլավոնական, աբխազա-ադրդեական լեզուներ, արաբերեն, հրեերեն, հունարեն և այլն)՝ հեղինակը փոքրիկ ակնարկով անդրադառնում է նաև հայերենին՝ նկատելով, որ կրկնասեռությունը

¹ Ա. Աբրահամյան, *Բայը ժամանակակից հայերենում*, Եր. , 1962, էջ 703:

² Վ. Կատվայան, *Բայագետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ*, Եր. , 2016:

³ Գ. Խաչատրյան, *Գրաբար*, Եր. , 2014:

⁴ Էդ. Մկրտչյան, Լ. Խաչատրյան, *Հայոց լեզվի պատմության դասընթաց. գրային ժամանակաշրջան*, Եր. , 2016:

⁵ Տ. Սաֆարյան, *Հայերենի կրկնասեռ բայերը*, Եր. , 2013:

⁶ <<Քերականական իմաստափոխությունները հայերենի պատմական զարգացման մեջ (անվանական և բայական համակարգերում)>>:

⁷ Տե՛ս Ա. Летучий., *Типология лабильных глаголов.-Москва.: Языки славянской культуры*, 2013, էջ 2:

հայերենում ընդհանուր առմամբ զարգացած չէ և հիմնականում պայմանավորված է խնայողության սկզբունքով: Նման պնդումը, ինչն էլ մակերեսային պատկերացումների հետևանք, առավել ակնհայտ է դարձնում հայերենի լեզվական փաստերի ոչ միայն նորովի ուսումնասիրության, այլ նաև լուսաբանման անհրաժեշտությունը: Խնդրո առարկայի՝ մեր կողմից կատարված քննությունը հաստատում է, որ կրկնաստեռությունը հայերենում համակարգային երևույթ է՝ տարժամանակյա ուշագրավ զարգացմամբ⁸:

ԳԼՈՒԽ Ի. ԿՐԿՆԱՍԵՌՈՒԹՅԱՆ ԻՍԱՍՏԱՅԻՆ- ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Առաջին գլուխն ունի երկու ենթագլուխ՝ «*Հայերենի կրկնաստեռ բայերի պատմական ժառանգությունը. դասական գրաբարի կրկնաստեռ բայերը*» (հինգ ենթաբաժնով) և «*Հետդասական գրաբարի կրկնաստեռ բայերը*»:

Նկատի ունենալով գրաբարի բնագրային սկզբնաղբյուրների, հեղինակային համաբարբառների և բառարանների փաստական հարուստ նյութը՝ մենք գրաբարի կրկնաստեռ բայերը քննել ենք ըստ ժամանակային գործոնների (դասական և հետդասական ենթաշրջաններ), ձևախմբատային և ոճական-գործառական հատկանիշների, ըստ խնդրառության և կաղապարավորման, լծորդությունների և սկզբնահիմքերի կազմության՝ փորձելով ներկայացնել հայերենի բայական համակարգում կրկնաստեռության ձևավորման և զարգացման դիսկուրսը, արձանագրել և մեկնաբանել կատարված տարժամանակյա փոփոխությունները: Նյութի նկարագրությունն ուղեկցվում է համապատասխան վիճակագրությամբ՝ կրկնաստեռության ձևախմբատային դրսևորման յուրաքանչյուր տեսակը ճշգրիտ և առավել տիպական օրինակներով ներկայացնելու համար:

1.2 Բառաբաղված փաստական նյութի քննությունը վկայում է, որ հին հայերենի կրկնաստեռ բայերի թիվը հասնում է 500-ի: Ի տարբերություն մինչ այժմ կրկնաստեռության հարցին անդադարձած ուսումնասիրողների, որոնք գրաբարի տրամադրած փաստերն ընկալել են իրենց ամբողջության մեջ և դիտարկել որպես համեմատելի եզր արդի հայերենի համար, մենք կրկնաստեռ բայերի պատմական

⁸ Նկատենք, որ մինչև այժմ խնդրո առարկայի որևէ ուսումնասիրող չի անդրադարձել հիշատակված այլաբան արդյուրներին, որոնք ոչ միայն ընդլայնում են հայերենի լեզվական նյութի քննության սահմանները, այլ նաև կրկնաստեռության զարգացման դիսկուրսն վեր հանելու նոր հնարավորություն են տալիս: Նման դիտվածքով կատարված քննությունը ամբողջացնում է կրկնաստեռության գիտական նկարագրությունը՝ հիմքում ունենալով նաև հայերենի և ցեղակից լեզուների համատիպ իրողությունները և միևնույն ժամանակ ընդգծելով հայերենի ինքնատիպությունը վերջիններիս համեմատությամբ:

ժառանգության շերտ դիտել ենք **դասական ենթաշրջանի** բնագրային սկզբնաղբյուրներում արձանագրված մոտ 250 կրկնասեռ բայերը և կատարված քննության արդյունքներն ընդունել որպես ուսումնասիրության ելակետ՝ կրկնասեռության ձևախմաստային դրսևորումների նախնական վիճակի մասին պատկերացում կազմելու և հայերենի զարգացման հետագա շրջաններում հնարավոր փոփոխությունները բացահայտելու և ներկայացնելու համար: Նման մոտեցումը պայմանավորված է ոչ միայն գրաբարի մակարդակում կրկնասեռ բայերի թվի աճով⁹, այլ նաև որակական այն լուրջ փոփոխություններով, որոնց ենթարկվում է հին հայերենը 5-րդ դարի երկրորդ կեսից հետո:

1.2.ա) Ըստ կրկնասեռության ձևային դրսևորման՝ դասական գրաբարի բայերը բաժանվում են երկու խմբի՝ **նբ/չբ համադրական (սինիթետիկ) կրկնասեռություն և ունեցող բայեր** (ներգործական և չեզոք սեռերի նշանակություններն արտահայտվում են բառարանային մեկ բառույթով¹⁰) և **նբ/չբ սեռային զուգահեռություն և ունեցող բայեր** (ներգործական և չեզոք սեռերի նշանակություններն արտահայտվում են *ե-ի* քերականական լծորդափոխությամբ¹¹):

Կրկնասեռությունը գրաբարում հիմնականում պայմանավորված է քերականական նշանակություն ստացող բազմմաստությամբ, ընդ որում, **ներգործական և չեզոք սեռերի բառիմաստների առնչակցությունները** միանգամայն տարբեր են, մասնավորապես՝ կարող են լինել՝ **ա. հոմանշային շարքի՝ տարբեր ձևավորում ունեցող լրացումներ ստացող միավորներ**, օրինակ՝ **լալ**՝ նբ՝ **ողբալ**, սգալ, չբ՝ **արտասուք թափել**, լաց լինել, և այլն, **բ. նույն գործողության հակադարձ ուղղվածությունն ունեցող բառիմաստներ**, ինչպես՝ **աշխատել**՝ նբ՝ **չարչարել**, **ներդություն տալ**՝ **պատճառել**, չբ՝ **ներդություն կրել**, **տառապել**, **գ.** արդի լեզվամտածողությամբ **իմաստային որևէ ընդհանրություն**

⁹ Մեր կատարած քննությունը վկայում է, որ գրաբարի կրկնասեռ բայերի թիվը գրաբարի մակարդակում կայուն չէ. եթե 5-րդ դարի բնագրերում արձանագրված են շուրջ 300 կրկնասեռ բայեր, ապա մինչև 11-12-րդ դարերը այդ բայերի թիվը հասնում է մոտ 500-ի, այսինքն՝ որոշ բայեր ձեռք են բերում կրկնասեռություն պայմանավորող նոր նշանակություններ, իսկ որոշ նորակազմություններ գործածության մեջ են մտնում հենց որպես կրկնասեռ բայեր:

¹⁰ Օրինակ՝ **կատակել**- նբ՝ **1. մեկին կատակի առարկա դարձնել, կատակ անելով ծաղրել** [Ե. իբրեւ **կատակեցին** գևա, մերկացուցին զքղափոյն (Մարկ., ԺԵ, 20)], **2. հեզնել, չբ՝ 3. կատակ անել, 4. մի բան անել կամ ասել կատակի համար** [Ե. յաւուր յորում խօսեր ընդ նոսա Տեր, **կատակեին** (Ա Եզր. Ա, 51)]:

¹¹ Օրինակ՝ **յորդել**- նբ՝ **1. հոսեցնել, բխեցնել** [Ե. բուրք **յորդեսցեն** զկաթն (Յովէ, Գ, 19)], **(իմ)-չբ՝ 2. հոսել, վարարել** [Ե. **յորդեսցեն** իբրև զգուր իրաւունք (Ամոս. , Ե, 24)], **3. փութալ** [Ե. իբրեւ զվտակ, զի **յորդե** մտանել ի դրախտ (Սիր., ԻԴ, 41)] և այլն:

չունեցող բառիմաստներ, օրինակ՝ **ավանդել**-նք՝ *հանձնել*, չք՝ *սղեղներ*, **խանձել**-նք՝ *այրել*, չք՝ *տռվիս, սաստիկ փափագել* և այլն:

Նք//չք նշանակությունները սովորաբար քերականորեն համագործակցում են որոշ բայերում (օրինակ՝ *վանել, քսել, բախել, վիժել* և այլն) ուժեղ է արտահայտված ներգործական, որոշ բայերում (օրինակ՝ *փայլատակել, թևակոխել, պարսպել, ծառայել* և այլն)՝ չեզոք սեռի գաղափարը: Ենթադրում ենք՝ ներգործական և չեզոք սեռերի նշանակությունները կարող էին ունենալ նաև ոճական (ինչպես, օրինակ՝ **բարեգործել** և **զանազանել** կրկնասեռ բայերի՝ հունաբանությամբ պայմանավորված *երջանկանալ* և *գերազանցել* նշանակությունները), ինչպես նաև գործածության հաճախականության տարբերություններ, ուղղակի գրաբարի պարագայում հասկանալի պատճառներով դժվար է խոսել լեզու-խոսք հարաբերակցության մասին¹²:

Կրկնասեռ բայերի թեմատիկ-իմաստային խմբերը:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ հայերենին ցեղակից և ոչ ցեղակից բազմաթիվ լեզուներում կրկնասեռության հակում ունեն իմաստային որոշակի խմբերի պատկանող բայերը, օրինակ՝ բուլղարերենում՝ փուլային (*սկսել, շարունակել, վերջանալ*), հունարենում, լեհերենում և ռուսերենում՝ շարժում արտահայտող (*գնալ, տանել*) բայերը և այլն: Հին հայերենի կրկնասեռ բայերը թեմատիկ-իմաստային խմբերի բաժանելու փորձը երևան է հանում մի հետաքրքրական իրողություն. վերջիններս կարող են ընդգրկվել ինչպես նշված (*փուլային՝ անփոփել, վախճանել, շարժում արտահայտող՝ արշավել, ճեպել, դեղևել*), այնպես էլ գոյություն ունեցող մյուս (գրեթե բոլոր) խմբերում՝ *ասացական բայեր՝ աղաղակել, աղաչել, աղերսել, բարբաջել* և այլն, *իմացական բայեր՝ տարբերել, զանազանել, զգալ* և այլն, *փոփոխության բայեր՝ խառնել, փխրել, մտածական բայեր՝ խորհրդածել, մեքենայել, հարկադրական բայեր՝ բռնավորել, բռնակալել, տիրել, իշխել* և այլն, *զգացական բայեր՝ ախորժել, անխայել, բերկրել, գարշել* և այլն: Առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում հայերենի և ոչ ցեղակից լեզուների համատիպ իրողությունների ընդհանրությունները: Դա վերաբերում է ինչպես կրկնասեռության հակում ունեցող առանձին բայախմբերին (օրինակ՝ աստվածաշնչյան երբայերենին հատուկ է հեղուկի հոսելու նշանակություն ունեցող կրկնասեռ բայախումբը¹³, որը կա նաև գրաբարում՝ *բխել, հոսել, հորդել, հեղուլ* և այլն), այնպես էլ կրկնասեռ բայերի դասերին առհասարակ: Համեմատելով եվրոպական և հյուսիսկովկասյան (Նախ-դաղստանյան և արխագ-

¹² Հարցն այն է, թե արդյո՞ք բառարաններում արձանագրված և որոշակի քանակությամբ բնագրային վկայություններ ունեցող բայը գործածության լույս հաճախականությունն ուներ կենդանի խոսքում, կամ բառարանում բնագրային որևէ վկայություն չունեցող բայը բնավոր խոսքում արդյո՞ք չէր օգտագործվում:

¹³ Տե՛ս **А. Летуший**, նշվ. աշխ., էջ 120:

աղղեական) լեզուների կրկնասեռ բայերի իմաստային շրջանակները՝ Ա. Լետուչիյը բացահայտում է, որ եվրոպական լեզուներում կրկնասեռության հակում ունեն գերազանցապես իմաստային ցածր, իսկ կովկասյան լեզուներում՝ իմաստային բարձր անցողականություն ունեցող բայերը (համապատասխանաբար՝ *շարժում արտահայտող, փուկային և ոչնչացման ու փոփոխության* բայեր¹⁴): Լեզվաբանի կողմից առանձնացված երկու խմբերն էլ հատուկ են հայերենին:

Մեր կատարած քննությունը վկայում է, որ դասական գրաբարի կրկնասեռ բայերը գերազանցապես պատկանում են համագործածական բառաշերտին՝ *ագղել, աղերսել, աղմկել, ամփոփել, աշակերտել, ավանդել, բողոքել, գովել, երկնել, զինել, խավարել, խմբել, խուճապել, կքել, հրաժարել, հապաղել, հոսել, մաղթել, ներել, նենգել, շտապել, շնչել, սահել, վկայել, վախճանել, տագնապել փխրել, ողբալ, խոկալ, լուտալ, երդնուլ, յաւելուլ* և այլն: Դժվար չէ նկատել, որ սրանք հայ ժողովրդի կենդանի խոսքի բառերն են, ուստի ունեն կիրառելիության անսահմանափակ հնարավորություններ: Կրկնասեռության նման ընդգրկվածությունը վկայում է քերականական այս առանձնահատկության՝ հին հայերենի բայական համակարգին առհասարակ բնորոշ լինելը՝ անկախ իմաստաբանական պլանում ունեցած որևէ զանազանությունից: Այս առումով հայերենը հիշեցնում է հնդեվրոպական նախալեզուն: Եթե ասվածին հավելենք, որ տարարժեքությունը հատուկ է նաև գրաբարի անվանական համակարգին՝ ի դեմս խոսքիմասային տարարժեքության¹⁵, կարելի է ենթադրել, որ հայերենը լավագույնս պահպանել և գրաբարյան շրջանում արտացոլել է նախալեզվին բնորոշ առանձնահատկություններ և, ամենայն հավանականությամբ, ներկայացնում է շատ ավելի հին վիճակ, քան ցեղակից այլ լեզուներ:

1.2. բ) Դասական գրաբարի կրկնասեռ բայերը՝ ըստ լծորդությունների և սկզբնահիմքի կազմության: Խնդրո առարկա շուրջ 250 կրկնասեռ բայերից մոտ 200-ը՝ *ե*, մոտ 30-ը՝ *ա*, 4-5-ը՝ ու լծորդության պարզ բայեր են¹⁶: Ածանցավոր բայերի չափազանց փոքր թիվը (10-15 բայ՝ *թքանել, հատանել, լուծանել, լքանել, մերկանալ, տեղեկանալ* և այլն) պայմանավորված է բայածանցների՝ կերպային կարգին զուգընթաց չեզոք սեռն արտահայտելու հանգամանքով¹⁷:

¹⁴ **А. Летуций, Лабильные глаголы в европейских и северокавказских языках. Опыт сравнительного анализа,** История языка. Типология. Кавказоведение М. : Наука, 2013, էջ 169-212:

¹⁵ Այս հարցը քննության ենթ ենթարկել մեր թեկնածուական ատենախոսության առաջին գլխում:

¹⁶ Ի լծորդության բայերին բնորոշ է նր/կր կրկնասեռությունը (դասական գրաբարի ունի *հասարակ* սեռի մոտ 30 բայ (տե՛ս **Վ. Առաքելյան, Գրաբարի քերականություն,** էջ 147)):

¹⁷ Ե խոնարհումը, իբրև ներգործական բայերի խոնարհում, մերժել է ածանցավոր բայերի ներթափանցումը: Գրաբարի *ե* խոնարհման մոտ յոթանասուն ածանցավոր բայերի միայն հինգ տոկոսն է ներգործական սեռի (տե՛ս **Վ. Առաքելյան, Եզվ. աշխ.**, էջ 118):

Կրկնասեռ բայերը բացարձակ մեծամասնությամբ անվանակազմ են և կառուցվածքային տեսակետից որևէ սահմանափակություն չունեն (պարզ՝ *լարշել, կծկել, սզալ* և այլն, բաղադրյալ՝ *միաբանել, անհրապել, կոտակել* և այլն): Շատ ավելի փոքրաթիվ են բուն բայական հիմք ունեցող կրկնասեռ բայերը՝ *խորովել, ժխտել, մեկնել, ներել* և այլն:

1.2. դ) Դասական գրաբարի կրկնասեռ բայերի խնդրառությունն ու կաղապարումը: Ներգործական սեռի բայերը հայերենում կարող են լինել միարժույթ կամ բազմարժույթ, չեզոք սեռի բայերը մեծ մասամբ միարժույթ են¹⁸: Կրկնասեռ բայերը միարժույթ լինել չեն կարող¹⁹, քանի որ գործածությունից դուրս կրկնասեռ բայերի խնդրառության տիրույթում առկա է նվազագույնը երկու մասնակաղապար, որոնցից մեկն առաջադրում է ուղիղ խնդրի պահանջ, իսկ երկրորդը բացառում է այն, այսինքն՝ կրկնասեռության ձևավորման համար առանցքայինը ուղիղ խնդրի պահանջի բնականությունն է և վերջինիս բացառումը միևնույն բայի խնդրառության տիրույթում (այդ պահանջը կարող են առաջադրել և բացառել միևնույն բառիմաստը կամ տարբեր բառիմաստներ)²⁰: Կրկնասեռ բայի իմաստային արժույթները ներունակ են պայմանավորելու իրացման երկու տարբերակներ՝ մեկ կամ երկու պարտադիր մասնակիցներով²¹:

1. 2. ե) Դասական գրաբարի կրկնասեռ բայերը՝ ըստ տարբեր ենթակաների հետ կապակցվելու կարողության ընդհանուր առմամբ չեն տարբերվում միասեռ բայերից. կարող են պահանջել և՛ միադաս (անձնանիշ՝ *կատակել, մերժել*, իրանիշ՝ *բուրել, ծագել* և այլն), և՛ տարադաս (*առաւելուլ, խղիսայթել*) ենթականեր: Կրկնասեռության ձևավորումը (կամ չեզոքացումը) պայմանավորում է արժույթային և դասանշային կապակցելիության և ըստ դասային խմբերի՝ նաև ենթակաառության փոփոխություններ:

¹⁸ Տե՛ս **Յ. Զարուբյունյան**, Կառավարումը ժամանակակից հայերենում, Եր. , 1983, էջ 146:

¹⁹ Իհարկե, կոնկրետ կիրառության մեջ դարձյալ ունենք կամ ներգործական, կամ չեզոք սեռի բայ՝ նույն կաղապարներով:

²⁰ Օրինակ՝ **աղաղակել** կրկնասեռ բայն ունի *ճիչ արձակել* (ջբ) և *բարձր ձայնով ասել* (սբ) նշանակությունները: *Տջալ* իմաստով գործածվելիս բայը որևէ խնդիր լրացում չի ստանում. ունի միայն մեկ արժույթ՝ ենթակա, իսկ *բարձր ձայնով ասել* նշանակությամբ գործածվելիս առաջանում է նաև ուղիղ խնդրի պահանջ՝ աղաղակել *ինչ*: Այս դեպքում բայն արդեն ունի երկու արժույթ՝ ենթակա և ուղիղ խնդիր:

²¹ Իմաստային կապը կրկնասեռ բայերի նշված երկու մասնակաղապարների միջև կարող է լինել ուղղակի կամ պայմանական՝ ըստ պատմական ժամանակահատվածի լեզվամտածողության: Անկախ այդ հանգամանքից՝ երկու դեպքում էլ մենք գործ ունենք նույն բայի խնդրառության տիրույթի, ուստի՝ կրկնասեռության հետ: Մասնակաղապարի ընտրությունը պայմանավորված է հարդրակցման նպատակով, իսկ շարահյուսական կառույցը կարող է լինել ինչպես հազեցած, այնպես էլ ոչ հազեցած:

1. 3. Հետդասական գրաբարի կրկնասեռ բայերը: Հետդասական գրաբարի բնագրերում արձանագրված են 200-ից ավելի կրկնասեռ բայեր, որոնց մի մասը, օրինակ՝ *դրժել, բացափայլել, վերագոչել* և այլն, ըստ մեր ձեռքի տակ եղած փաստական կյուբի, դասական գրաբարի աղբյուրներում առհասարակ չի հիշատակվում, իսկ մյուս մասը՝ *ազազել, ժառանգակցել, ոտնառել* և այլն, հիշատակվում է քերականական մեկ սեռով: Ձևախմբատային առանձնահատկությունների առումով գրաբարի երկու ենթաշրջանների կրկնասեռ բայերի տարբերություններից մեկը սկզբնահիմքերի կազմության փոփոխությունն է, մասնավորապես՝ հետդասական ենթաշրջանում պարզ սկզբնահիմքերով կրկնասեռ բայերի թվի նվազումը և համատիպ բաղադրիչներ ունեցող սկզբնահիմքերով կրկնասեռ բայերի թվի աճը՝ 220/50 և 20/100 հարաբերակցությամբ: Այս իրողությունը նախ և առաջ պայմանավորված է նորակազմությունների, հատկապես՝ հելլենասեր թարգմանիչների կողմից ստեղծված հունատիպ նորակազմությունների գործոնով՝ *արտաբուրել, ստորահոսել, շարամերծել* և այլն: Լեզվական փաստերը տալիս են որոշակի ընդհանրացումների հիմք (տույնիսկ սխալների և վրիպումների որոշակի քանակի կանխատեսմամբ), բայց առանձնակի զգուշավորությամբ վերաբերվելով գրաբարի մակարդակում սեռային տեղաշարժերի հարցին²² մենք սկզբնաձևային ենք դիտել միայն դասական գրաբարի կրկնասեռ բայերը՝ առկախելով հետդասական գրաբարում կրկնասեռության ձևախմբատային տեսակների գոյության հարցը:

ԳԼՈՒԽ II. ԿՐԿՆԱՍԵՌՈՒԹՅԱՆ ԻՄԱՍԱՍՅԻՆ-ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Երկրորդ գլուխն ունի երկու ենթագլուխ՝ *«Միջին հայերենի կրկնասեռ բայերի գրաբարյան շերտը»* և *«Բուն միջինհայերենյան կրկնասեռ բայերը»* (երկուական ենթաբաժիններով):

2. 1. , 2. 2. Ներկայացվում են միջին հայերենի խոնարհման համակարգի առանձնահատկությունները, ապա՝ հարցի պատմությունը: Այն վկայում է, որ լուրջ ուսումնասիրություններ՝ կապված միջին հայերենում կրկնասեռության տեսական հիմնավորումների կամ իմաստաքերականական բացատրությունների

²² Հնարավոր է՝ որոշ բայեր կրկնասեռ են դարձել հենց գրաբարի մակարդակում բնիմաստների զարգացման կամ հին հունարենից կատարված իմաստային պատճենումների հիմունքով, իսկ բայերի մյուս խումբը ձևավորվել է 5-րդ դարի երկրորդ կեսից հետո (հայերենի բառակազմական կաղապարներով): Միևնույն ժամանակ բացառված չէ, որ այդ բայերից կամ վերջիններիս կրկնասեռությունը պայմանավորող նշանակություններից շատերը կարող էին գործածական լինել նաև դասական ենթաշրջանում, բայց չարձանագրվել կամ մեզ չհասել:

հետ, գրեթե չեն կատարվել: Եղած մասնակի անդրադարձերը սովորաբար հենվել են բառահոդվածների և ոչ թե բնագրային սկզբնաղբյուրների ուսումնասիրության վրա: Մեր կատարած քննությունը վկայում է, որ միայն բառարանով առաջնորդվող ուսումնասիրողի տեսադաշտից դուրս են մտնում խնդր ու առարկա բազմաթիվ բայեր²³, քանի որ նախ՝ միջին հայերենի բառարանում արձանագրված չեն գրաբարյան կրկնասեռությունը պահպանած բայերը²⁴, և երկրորդ՝ բառարանում կան միասեռ դիտված բայեր, որոնք, ըստ միջինհայերենյան բնագրերի, կրկնասեռ են²⁵: Հնարավոր անճշտություններից խուսափելու համար մենք ուսումնասիրել ենք շուրջ չորս տասնյակ սկզբնաղբյուրներ²⁶ և վերջիններիս տվյալները համադրելով բառարանային տվյալներին՝ միջին հայերենում տարբերակել ենք կրկնասեռ բայերի երկու շերտ՝ **գրաբարյան կրկնասեռությունը պահպանած բայախումբը և բուն միջինհայերենյան կրկնասեռ բայերը**:

2. 3. Միջին հայերենի կրկնասեռ բայերի գրաբարյան շերտը:

Մեր կատարած քննությունը վկայում է, որ գրաբարի շուրջ 500 կրկնասեռ բայերից մոտ 250-ը անցել է միջին հայերենին, ընդ որում՝ շուրջ 200-ը՝ առանց ձևախմբաստային որևէ փոփոխություն կրելու (փչել, ընթրել, աղաղակել, ապաստանել, հաստատել և այլն²⁷), իսկ 50-ը՝ ձևախմբաստային տարատեսակ փոփոխություններով: Դրանք

²³ Օրինակ՝ Տ. Սաֆարյանը, անդրադառնալով միջին հայերենի կրկնասեռ բայերի քննությանը, փաստական կյուրք քաղել է «Միջին հայերենի բառարանից» և առանձնացրել ընդամենը 30 կրկնասեռ բայ (տե՛ս նշվ. աշխ., էջ 47), մինչդեռ մեր կատարած ուսումնասիրությունը վկայում է, որ միջին հայերենի կրկնասեռ բայերի ընդհանուր թիվը հասնում է 300-ի (տե՛ս Գ. Չաքյան, *Միջին հայերենի կրկնասեռ բայերը*, Գյումրի, 2016):

²⁴ Պատճառը միջին հայերենի բառարանի կազմության սկզբունքն է. բառարանի հիմքում ընկած է ոչ թե միջին հայերենի ողջ բառամթերքը, այլ միայն այն բառերը, ոճերն ու դարձվածքները, որոնք ձևախմբաստային առումով բնորոշ չեն գրաբարին և ընդհանրապես չեն հանդիպում 5-11-րդ դարերի մատենագրության մեջ:

²⁵ Բնագրային օրինակները վկայում են գրաբարում չեզոք սեռի մի խումբ բայերի՝ **անդորրել, անզգամել, բարգավաճել, բորոտել, գունատել** և այլն, միջին հայերենում նաև ներգործական սեռի նշանակությամբ գործածվելու, այսինքն՝ կրկնասեռ լինելու փաստը:

²⁶ **Սմբատ Սպարապետի** <<Պատաստանագիրքը>> և <<Տարեգիրքը>>, **Ներսես Շնորհալու** *հանելուկները*, <<Պատմութիւն վարդիկը>> և <<Ընտիր մատենագիրք>>, **Խաչատուր Կեչառեցու**, **Հովհաննես Պյոլզ երզնկացու**, **Ֆրիկի**, **Կոստանտին Երզնկացու**, **Բժշկապետ Գրիգորիսի**, **Վարդան Այգեկցու**, **Հովհաննես Թլկուրանցու**, **Ամիրդովաթ Ամասիացու**, **Սկրտիչ Նաղաշի**, **Գրիգորիս Արթամարցու** երկերը, <<Գիրք վաստակոց>>, **Մխիթար Հերացու** <<Տերմանց մխիթարությունը>>, **Ամիրդովաթ Ամասիացու** <<Անգիտաց անպետը>>, **Մխիթար Գոշի** առակները, **Գրիգոր Տաթևացու** <<Ոսկեփորիկը>> <<Լուծմունք>>-ը, <<Քարոզգիրք. ամռան հատոր>>-ը և <<Գիրք հարցման>>-ը, **Հայ պանդխտության տաղերը**, **Առաքել Սյունեցու** <<Աղանգիրքը>>, **Հովհաննես Սարկավազի** <<Սուփերը հայկականը>>, **Թովա Արծրունու** <<Պատմութիւն տանն Արծրունկաց>> երկերը, **Հովհաննես Կաթողիկոսի** <<Պատմագրութիւնը>>, **Կիրակոս Գանձակեցու** <<Պատմութիւն հայոց>> աշխատության համաբարբառը, **Արիստակես Լաստիվերցու** <<Պատմութիւնը>>, **Ներսես Լամբրոնացու** <<Մտենաբանութիւնը>> և այլն:

²⁷ Այս բայերը միջին հայերենի բառարանում հիշատակված չեն. բոլոր վկայությունները մենք քաղել ենք բնագրային սկզբնաղբյուրներից:

հանգում են հետևյալին. *գրաբարի կրկնաստե բայերը փոխել են ձևը, բայց պահպանել են նույն իմաստները*²⁸, *գրաբարի բայերը փոխել են և՛ ձևը, և՛ իմաստային շրջանակը*²⁹, *գրաբարի բայերը ձևով մնացել են նույնը, բայց կրել են հասկացության ծավալի փոփոխություններ*³⁰: Կատարված զուգադրական քննությունը բացահայտում է հայերենի երկու լեզվափուլերի կրկնաստե բայերի ինչպես ընդհանրությունները, այնպես էլ տարբերությունները: Օրինակ՝ գրաբարի կրկնաստե բայերը սովորաբար բազմիմաստ են, իսկ ձևապես միջինհայերենյան դիտվող տարբերակներն այլևս չունեն իմաստային լայն ընդգրկումներ, ընդհանուր առմամբ գործածվում են նախկին իմաստների զգալի սահմանափակմամբ՝ պայմանավորված բնիմաստների պահպանման և երկրորդական նշանակությունների՝ գործածությունից դուրս գալու հանգամանքով³¹:

Նշված ձևաիմաստային տարբերություններից առավել հետաքրքրական և կարևոր են քերականական հատկանիշների տարբերությունները. գրաբարից ժառանգված 50 բայերից (**հատանել, յերկարել, սատակել, յաջողել, խորովել, վճարել, հաւանել** և այլն) շուրջ 40-ի միջինհայերենյան բարոյաբերակները կրկնաստե չեն (**հատնիլ, յերկրել, սատկիլ, աջողիլ** բայերը միջին հայերենում՝ չեզոք, իսկ **խորվել, վճառել, հաւնենալ** բայերը ներգործական սեռի բայեր են):

Խնդրո առարկա բայերի իմաստային շրջանակների բեռնաթափումը և քերականական հատկանիշների փոփոխությունը վկայում են հայերենի բայական համակարգում սկսված գործընթացի մասին, որը կարելի է կոչել *կրկնաստեռությունից միաստեռության անցում* կամ *կրկնաստեռության չեզոքացում*:

2.4. Բուն միջինհայերենյան կրկնաստե բայերը, ըստ մեր կատարած քննության արդյունքների, մոտ 50-ն են և ներկայանում են երկու շերտով: **ա) Տարժամանակյա կրկնաստե բայեր.** սեռային տեղաշարժեր գրաբար-միջին հայերեն ժամանակահատվածում: Մեր

²⁸Օրինակ՝ անյուսանալ/անյուսել, երկիրպագանել/երկիրպագել/երկրպագել և այլն:

²⁹Օրինակ՝ միջին հայերենում վկայված են գրաբարում կրկնաստե **հոտոտել** բայի **հոտոտալ/հոտովրալ/հոտոտալ** տարբերակները, որոնք չունեն գրաբարի չեզոք սեռի *մոտենալ, դիպչել* նշանակությունները:

³⁰Օրինակ՝ **խռովել** և **ծաղկել** կրկնաստե բայերը միջին հայերենում ձեռք են բերել նոր նշանակություններ, համապատասխանաբար՝ *նեղանալ*. Իմ եսր, քեզ վատ չեմ ասեր, դու հիմի է՛ր *ես խորովեր* (ՆԲ, 43) և *Նկարագարդել մատյանները. Ծաղկեաց* զվկտարանս և գլխագրեց (ՄԲ, 341):

³¹ Օրինակ՝ **հաւասարել** կրկնաստե բայը գրաբարում ունի նր՝ 1. *հավասար դարձնել, հավասարեցնել, նմանեցնել*, 2. *մասնակից, կցորդ դարձնել*, չք՝ 1. *հավասար դառնալ, հավասարվել, նմանվել*, 2. *համեմատվել, բարդատվել*, 3. *մասնակից, կցորդ լինել, ձայնակից լինել* նշանակությունները: **Հաւարել** միջինհայերենյան տարբերակն ունի ներգործական սեռի *հավասարեցնել* և չեզոք սեռի *հավասարվել, հավասարապես տարածվել* նշանակությունները. [Գլխուն զգճութիւն տայ և մազն *հաւարել*: ... և ապա *հաւարի* ի յամեն մարմինս (ՄԲ, 420)]:

ուսումնասիրությունը վկայում է, որ գրաբարում քերականական մեկ սեռ ունեցող շուրջ երկու տասնյակ բայեր միջին հայերենում կրկնասեռ են, քանի որ ձեռք են բերել Նոր նշանակություններ կամ, գրաբարյան խնդրառությունը պահպանելով հանդերձ, ունեն նաև այլ ձևով խնդիր ստանալու հատկություն: Համադրական կրկնասեռության ձևավորման պարագայում Նոր բայիմաստ(ներ)ը «ամրանում են» գրաբարյան բայի իմաստային շրջանակում, ինչպես՝ **բռնել** բայի՝ *արմատակալել, կպչել (ծառերի մասին), զարկել* բայի՝ *ուղղություն բռնել, գնալ* նշանակությունները, իսկ սեռային զուգահեռության դեպքում արտահայտվում են *ե-ի* քերականական լծորդափոխությամբ՝ գրաբարի համեմատ երբեմն ունենալով նաև կազմության, լծորդության և հնչյունական թաղանթի մասնակի տարբերություններ, օրինակ՝ **արածել-արծել//արծիլ**³², **զարկանել-զարկել//զարկիլ, կալանել-կալնել//կալնիլ, փաթուրել-փաթթել//փաթթիլ, ճեղքել-ճղքել//ճղքիլ, ժողովել-ժողվել//ժողվիլ** և այլն³³:

բ) Համաժամանակյա կրկնասեռ բայեր: Որոշակի թվով կրկնասեռ բայեր գործածության մեջ են մտնում հայերենի պատմական զարգացման երկրորդ շրջանում, այսինքն՝ հինհայերենյան բնագրերում վկայված չեն: Խնդրո առարկա բայերի համար սերող հիմքեր են դարձել՝ ա գրաբարում գործածվող անվանական անկախ բառույթները՝ արևել (նր՝ արևի տակ դնել չորացնելու, արևիմ-չբ՝ արևկող լինել), ար(յ)ունել (նր՝ արյունոտ դարձնել, չբ՝ արյունոտ դառնալ), գճել (գունճ (ծուկ)՝նր՝ ծնկի վրա բերել, չբ՝ ծնկի վրա գալ) և այլն, ք փոխառությունները՝ **հիլաթել (հիլա (արաբ.՝ խարդախություն) նր՝ խաբել, չբ՝ խարդախել, դավել), սազել (սազ (պրսկ.՝ պատշաճ, հարմար) չբ-հարմարվել, նր՝ հարմարեցնել), մունետիկել (մունետիկ (արաբ.՝ մի բան հայտարարող) նր՝ հրապարակել // չբ՝ հայտնի դառնալ) և այլն, գ** միջին հայերենի բառապաշարի բաղադրատարր կազմող բարբառային բառերը՝ **մծրել (մծիլ՝ կրակի մանր մնացորդ, մոծիր) նր՝ մոխրացնել, մոխիր դարձնել չբ՝ մոխրանալ), ճկել (ճուկ՝ ծռած, ճկված)՝ նր՝ թեքել, կորացնել, չբ՝ թեքվել, կորանալ, հահանդել (հահանդ՝ հանգիստ)՝ նր՝ հանգստացնել, չբ՝ հանգստանալ, մճճել (մճուճ գանգուր)՝ նր՝ խճճել, չբ՝ խճճվել** այլն: Որոշ դեպքերում սկզբնահիմքը անկախ

³² Օրինակ՝ **արածել**-ը հին հայերենում նր է՝ 1. *արածեցնել, արածել տալ*, 2. *դալար խոտը ուտել, ճարակել*, 3. *փրկ. սպառել ոչնչացնել* նշանակություններով: Միջին հայերենում բայը կրկնասեռ է. **արծել-նր՝ արածել տալ** [Որ երբ *արծել* նա... գունտկներ կու լինի ի դիմակին ներքևն (ՄՀԲ, 90): Յովսեփ *արածեղ* գիտն և լինեղ հոգով գիտութեան, երազ տեսանեղ բարի (ՅԹԳ, 66)], **արծիլ-չբ՝ արածել, ճարակել** [Որ վազվազե ի վրայ մօրն և ուտե ի հետն ու *արծիլ* ի հետն (ՄՀԲ, 90)]:

³³ Սեռային զուգահեռությամբ երբեմն արտահայտվում են ոչ թե գործողության հակադրած ուղղվածությունը ցույց տվող, այլ միանգամայն տարբեր նշանակություններ, օրինակ՝ **եփիլ՝ հասունանալ** [Իկտուր ելունդն հասնի և *եփի* (Գր., 19)], **կտրատիլ՝ խիստ ցավել** [Լեոդն, որ ցաւ դիպի և *կտրատիլ* և արին թքանէ (Ալեքս, 35 ա)] և այլն:

գործածություն չունի, օրինակ՝ **ճորթել՝ նք՝ պատռել, ճեղքել // ճորթիլ՝ չք՝ պատռվել, ցրքել-նք՝ ցրել, տարածել // ցրքիլ-չք՝ ցրվել** և այլն³⁴:

Բուն միջինհայերենյան կրկնասեռ բայերը գրաբարի բայերի համեմատ ունեն իմաստային-գործառական դիմադրումների ակնհայտ տարբերություններ. աչքի են ընկնում իմաստային առավել նեղ շրջանակով, ժամանակի կենցաղավարությունը բնութագրող բառեր են և, բնորոշ լինելով խոսակցական և բարբառային մասնաշերտերին, ունեն գործառության շատ ավելի նեղ շրջանակ:

ԳԼՈՒԽ 111. ԿՐԿՆԱՍԵՌՈՒԹՅԱՆ ԻՍԱՍՏԱՅԻՆ-ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԻՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՐԴԻ ՅԱՅԵՐԵՆՈՒՄ

Երրորդ գլուխն ունի չորս ենթագլուխ՝ *«Արդի հայերենի կրկնասեռ բայերի տարժամանակյա շերտերը», «Արդի հայերենի կրկնասեռ բայերի համաժամանակյա շերտերը»* (երկուական ենթաբաժիններով), *«Ներգործական/չեզոք կրկնասեռությունը հայերենի տարժամանակյա դիտվածքում. կրկնասեռության չեզոքացում»* և *«Կրկնասեռությունը տարժամանակյա դիտվածքում. հայերեն և ցեղակից լեզուներ»*:

3. 1. Արդի հայերենի կրկնասեռ բայերի տարժամանակյա շերտերը երկուսն են՝ **ա) գրաբարյան** (մոտ 100 բայ) և **բ) միջինհայերենյան** (10 բայ): Գրաբարից արդի հայերենը ժառանգել է **ձևահմաստային առումով անփոփոխ** մոտ 30 (*հոգալ, պարապել, ապաստանել, թավալել, խռովել, աղաղակել, խորհրդածել* այլն) և **ձևահմաստային տարատեսակ փոփոխություններ** կրած մոտ 60 կրկնասեռ բայեր³⁵, որոնց մեծ մասն աչքի է ընկնում բացարձակ կենսունակությամբ և ակտիվությամբ: Ձևային փոփոխությունները (բայի կազմության կամ գրության) հիմնականում համակարգային բնույթի են՝ ուղղված լեզվի միօրինակության ծավալմանը, և բուն կրկնասեռության հետ որևէ առնչություն չունեն: Առավել կարևոր և հետաքրքրական են կրկնասեռ բայերի հասկացության ծավալների փոփոխությունները, որոնք հիմնականում պայմանավորված են բառապաշարի իմաստային զարգացմամբ: Գրաբարից

³⁴ Բերենք բնագրային օրինակներ. Օգտե այն գողերուն որ առնիւ զգողին ճակփան, Յորժամ ի վերայ քարի կոխէ, ևա ընդ ներքսէ առնիւ (ՄԶԲ, 93): Կաքավը քարէ թռավ, լերդա կ'առնիւնի (ԴԿ): Մեքքը ցճել ի չար գործոյ, պոռնկութեամբ խառնակելոյ (ՖրԲ, 99): Եւ առաջին հրահանգէր զնա ցճի ի յարանին, և ևա ոչ կարէր (ՄԳԱ, 95): Եւ պարունս պիտի տայ զիրենց ապրանքն և սագէ զիրենք: Նենգժոտ ազգն Յայոց հետ տամուսեկին չի սագելն (ՄԶԲ, 679): Մեռաւ ու զիս ու գողայքն որք արար և սճեց: Եկամուտ տաքութիւնն, ոկ չէ ի բնութեան՝ մճնի անդամսն ամեն մարմոյն (ՄԶԲ, 524): Թէ մէկ կտոր լինէր վզին ոսկորն՝ ևա վիզ չեր ճկիւ: Եւ ի ճկիւն ճակատն ցաւի (ՄԶԲ, 475): Ոչ կարէ զարինսն բռնել և ցրքել ի յանդամսն: Եւ ցրքի ի նոցանք յամեն մարմինն (ՄԶԲ, 775) և այլն:

³⁵ Յաշվի անելով այն հանգամանքը, որ շուրջ 300000 բառ ունեցող արդի հայերենով գրավոր բոլոր աղբյուրների ուսումնասիրությունը հնարավոր չէ (գրեմ մեկ հետազոտողի համար), իսկ գիտական ընդհանրացում կատարելն անհրաժեշտ է՝ խնդրո առարկայի քննությունն ամբողջացնելու համար, մենք արդի հայերենը գիտական պայմանականությամբ դիտել ենք հարաբերականորեն փակ և կայուն համակարգ:

ժամանակակից հայերենին անցած մի շարք կրկնասեռ բայեր այս շրջանում ձեռք են բերել նոր նշանակություններ (*կրկնասեռության պահպանումը հասկացության ծավալի ընդարձակումով*), ինչպես **սուլել** բայը՝ սուլելով ազդանշան տալ, **սովորել** բայը՝ որևէ կարգի ուսումնական հաստատության սովորող լինել և այլն: Մի շարք բայերի գրաբարյան որոշ նշանակություններ հնացել են կամ դուրս են մղվել գործածությունից (*կրկնասեռության պահպանումը հասկացության ծավալի նեղացումով*), օրինակ՝ **կարդալ** կրկնասեռ բայն արդի հայերենում չի պահպանել գրաբարյան *աղաղակել, օգնություն կանչել, անունը տալ, աղաչել* բայը՝ *աղոթել, արգահատել* բայը՝ *խնդրել, թախանձել* բայը՝ *թախծել, տրտմել, սխալվել, կոծել* բայը՝ *ծփալ, երկնել* բայը՝ *վշտանալ* նշանակությունները և այլն: Որոշ դեպքերում կրկնասեռությունը պահպանվել է *հասկացության ծավալի վերակազմավորմամբ*: Օրինակ՝ **հաճախել** կրկնասեռ բայն արդի հայերենում **պահպանել է** գրաբարյան *նր՝ 1. շատացնել, բազմացնել, ավելացնել. 2. հաճախ կրկնել, չք՝ 4. շատանալ, 5. հաճախ մի տեղ գնալ-գալ, կորցրել է չք՝ 5. երկար տևել, հարատևել* նշանակությունները և **ձեռք է բերել** հասարակական կյանքի զարգացմամբ պայմանավորված նոր իմաստ՝ չք՝ *6. մասնակցել ժողովների, հավաքույթների* և այլն:

բ) Միջին հայերենից արդի հայերենին անցած 10 կրկնասեռ բայերը³⁶ թեև արձանագրված են արդիհայերենյան բառարաններում՝ *աղբել, խալսել, մճճել, ձաբռտել, բռնել, զարկել, արևել, արյունել, ծռմռել, ճկել, սազել*, սակայն ակնհայտ է, որ գոնե առաջին չորսը ներկայումս հնացած կամ անգործածական են: Մյուս բայերի հասկացության ծավալներն արդի հայերենում հիմնականում ընդլայնվել են՝ ի հաշիվ իմաստային նորաբանությունների: Օրինակ՝ **բռնել** և **զարկել** կրկնասեռ բայերը միջին հայերենում ունեն վեց-յոթ, արդի հայերենում՝ 30-ից ավելի նշանակություններ, այդ թվում՝ բարբառային առումներ (օրինակ՝ **բռնել**՝ *ձերբակալել, կայանավորել, վարձել, ծառայության վերցնել, տարածվել, ծավալվել* և այլն, **զարկել**՝ *փչացնել, թալանել, շահել* և այլն):

3.2. Արդի հայերենի կրկնասեռ բայերի համաժամանակյա շերտերը: *ա) Մեռային տարժամանակյա տեղաշարժեր՝ կրկնասեռության ձևավորումով:* Մեր կատարած քննությունը վկայում է, որ գրաբարում միասեռ մոտ 30 բայեր, արդի հայերենում ձեռք բերելով սեռային տարբերություններ պայմանավորող նոր նշանակություններ, դառնում են կրկնասեռ: Իմաստային նորաբանությունները **բառի բնիմաստի զարգացման արդյունք** են, **նոր հասկացությունների անվանումներ** կամ **փոխաբերական**

³⁶ Խոսքը վերաբերում է միջին հայերենի կրկնասեռ բայերի համաժամանակյա մասնաշերտին, որն ընդգրկում է մոտ 50 բայ: Բացի հիշատակված 10 բայից, մյուսները տարժամանակյա կտրվածքում կամ կորցրել են կրկնասեռության հատկանիշը, կամ ուղղակի չեն անցել արդի հայերենին:

գործածություններ³⁷: Արդի հայերենի կրկնատե բայերի քննությունը հաստատում է այն պնդումը, որ հայերենում կրկնատեությունը պայմանավորող նր և չք նշանակությունները տարբեր բառիմաստներ են կամ ցույց են տալիս նույն գործողությունը՝ հակադարձ ուղղվածությամբ: Օրինակ՝ **սարսել**-ը գրաբարում չեզոք սեռի բայ է՝ *սոսկալ, ցնցվել, ահաբեկվել* նշանակություններով, արդի հայերենում ունի ոչ միայն նշված, այլև նաև *ցնցել, ահաբեկել, վախեցնել* իմաստները, այսինքն՝ կրկնատե է [..ցնցեց ոչ միայն այն երկիրը, որի քաղաքացին էր երիտասարդ լողորդը, այլև *սարսեց* ամբողջ երկրագունդը]: Արդի հայերենում կրկնատե դարձած **թարթել** բայն ունի ոչ միայն գրաբարյան *կոպերը խփել-բացել* ներգործական, այլև նոր՝ *կոպերը բացել-փակվել* չեզոք սեռի նշանակությունները [Երբեմն ճրագները *թարթում էին* երկու անգամ, երեք անգամ (ԱԲ)] և այլն:

բ) Համաժամանակյա կրկնատեության ձևավորում նորակազմությունների շրջանակներում³⁸: Կատարված քննությունը վկայում է, որ արդի հայերենն ունի մոտ 70 նորակազմ կրկնատե բայեր՝ *շողարձակել, գերակայել, մթազնել, սրտնեղել, ցնորաբանել* և այլն (նկատենք, որ կառուցվածքային-բառակազմական տեսակետից խնդրի առարկա բայախմբում անհամեմատ փոքր թիվ են կազմում պարզ սկզբնահիմք ունեցող բայերը, ինչպես՝ **գարունել, ծիածանել, ամպկոպել, զիգզագել** և այլն): Գրաբարի՝ հիմնականում համատիպ և առմիջուկային բաղադրիչներով սկզբնահիմքեր³⁹ ունեցող անվանական բաղադրությունների բայացումն իրականացել է՝ ա) խոսքիմասային նշանակության ուղղակի անցումով (օրինակ՝ **սրավար՝ սրընթաց, արշավատույր, սրավարել նր/չք՝ 1. արագորեն վարել, քշել, 2. սրընթաց արշավել, ընթանալ, բ) իմաստային շրջանակի մասնակի փոփոխություններով (օրինակ՝ **թմբկահար՝****

³⁷ Օրինակ՝ հին հայերենում **լրտեսել** բայն ունի նր՝ 1. *իբրև լրտես դիտել մի բան, հսկել մի բանի վրա՝ տեղեկություններ հավաքելու համար*, արդի հայերենում նր՝ *գաղտնաբար հետևել մեկի արարքներին, լսել խոսակցությունները*, 2. *չք՝ փխբ. դարան մտնել, դարանամուտ լինել* նշանակությունները [Ստիպված էր գնալ գիշերօթիկ և խստորեն պահանջել, որ դադարեցնի *լրտեսել* հայ ուսանողի նամակագրությունը (ԱԹ): Աղավալակը ձի չի մաքրում, քնում է Ջոքի սենյակում, *լրտեսում է*, քծնում.. (ԽԳ)]: **Չեկուցել**-ը գրաբարում (զեկուցանել) ներգործական սեռի բայ է՝ *տեղեկացնել, հաղորդել, հայտնել պատմել* նշանակություններով, իսկ արդի հայերենում կրկնատե է. ունի նաև չեզոք սեռի նոր նշանակություն՝ *հրապարակով հաղորդել, զեկուցում տալ որևէ այլ կրույթ մասին*. Ես գրել եմ վարչություն, *զեկուցել եմ* (ԱԿ): **Ծափել** բայը գրաբարում չեզոք սեռի բայ է՝ *ծափահարել* նշանակությամբ: Արդի հայերենում ունի նաև ներգործական սեռի *գովերգել* նոր նշանակությունը, այսինքն՝ կրկնատե է. Սովոր են *ծափել* թե՛ փառք, թե՛ անկում (ԵԶ) և այլն:

³⁸ Մենք փորձել ենք հնարավորինս ճշգրիտ կատարել և ներկայացնել համապատասխան վիճակագրությունը, թեև հասկանալի պատճառներով դժվար է պատկերացնել որևէ սկզբունք, որով այս շրջանի կրկնատե բայերի հաշվարկը կկատարվեր առանց թեթևությունների ու բացթողումների:

³⁹ Որոշ դեպքերում արդի հայերենյան նորաբանություններ են ոչ միայն բայերը, այլև վերջիններիս սերող հիմքերը, ինչպես՝ **քնքշաբան-քնքշաբանել, սիրաբան-սիրաբանել, կանխաբան-կանխաբանել, ցողաշաղ-ցողաշաղել** և այլն:

թմբուկ խփող, թմբկահարել՝ 1. թմբուկ խփել, 2. փխբ. լուրը տարածել, 3. փխբ. գովաբանել, փառաբանել, 4. փխբ. մատնետրով մի բանի պարբերականորեն խփել, 5. փխբ. առհասարակ հարվածներ հասցնել, խփել, դոփել) և այլն:

Նորակազմ կրկնասեռ բայերի մյուս խումբն ունի *N+բայ* կառուցվածքային կաղապարը (*N=բայից տարբեր խոսքի մաս*), օրինակ՝ **իշխել-գեղիշխել, կշռել-գեղակշռել, զգալ-նախազգալ, հայել-նեղհայել, վարել-դատավարել, բանել-տեսաբանել** և այլն: Նախատիպ բայերը կարող են լինել ինչպես միասեռ, օրինակ՝ **գործել-պատժագործել, հայել-մտահայել, հղանալ-մտահղանալ**, այնպես էլ կրկնասեռ, օրինակ՝ **շաղել-ցողաշաղել, բանել-քնքշաբանել, ծաղրաբանել, ցնորաբանել, զեղել-հորդագեղել** և այլն: Միասեռ և նորակազմ կրկնասեռ բայերի գուգադրական քննությունը վկայում է, որ վերջիններս ունեն կապակցական ընդհանրություններ: Կրկնասեռ բայերը սովորաբար պահպանում են միասեռ բայերի սեռային հատկանիշը՝ միևնույն ժամանակ ձեռք բերելով նաև կրկնասեռություն ձևավորող իմաստային նոր երանգ՝ նոր հատկանիշ: Նախատիպ բայերի կրկնասեռ լինելու պարագայում քերականական այս հատկանիշը սովորաբար փոխանցվում է նաև նորակազմությանը: Նորակազմ կրկնասեռ բայերից մի քանիսն ունեն կրկնավոր բայափոխքեր՝ **ծափծափել, ձայնձայնել** և այլն: Նախատիպ պարզ բայերի հետ վերջիններիս համեմատությունը բացահայտում է ինչպես բառիմաստային, այնպես էլ կերպային տարբերություններ⁴⁰:

Ի տարբերություն հայերենի զարգացման նախորդ փուլերի՝ արդի հայերենում որոշակի թիվ են կազմում նաև *նք//չք* կրկնասեռություն ունեցող ածանցավոր բայերը՝ կազմած **-ցն- սեռային-քերականական** և **-աւո-, -ոտ-** կերպային ածանցներով՝ **շվշվացնել, ծնզծնզացնել, շշատել, թթոտել** և այլն⁴¹:

Կրկնասեռություն ձևավորող իմաստային նորաբանությունները⁴², ինչպես նաև կառուցվածքային պատճենումները⁴³ որոշ դեպքերում կարող են պայմանավորված լինել ռուսերենի ազդեցությամբ:

⁴⁰ Օրինակ՝ **ծեքել-նք՝ խեղաթյուրել, աղճատել, ծռնել, ծեքծեքել** 1. **նք՝** աղավաղել, աղճատել, ծռնել: 2. **չք՝** սեթևեթել, **ծափել- նք//չք՝** 1. ծափահարել, 2. փխբ. ծափահարությամբ ուրախություն արտահայտել, 3. փխբ. իրար խփել, բախել, 4. փխբ. ծափի ձայն հանել, 5. գովերգել, **ծափծափել-նք//չք՝** տևականորեն, շարունակաբար կամ շատերը ծափ տալ և այլն:

⁴¹ Դաշվի առնելով այն հանգամանքը, որ կրկնասեռ բայերի այս խումբն ավելի բնորոշ է բարբառներին կամ խոսակցական հայերենին, մենք նախընտրել ենք նյութի քննությունը չընդգրկել բուն շարադրանքում և տալ որպես հավելված:

⁴² Ինչպես, օրինակ՝ **գիջել (уступить)** բայի՝ **իր հատկանիշներով ցածր մնալ, զեղչ կատարել, զեկուցել (докладывать)** բայի՝ **չք՝ զեկուցել ներկայացնել, պաշտոնական տեղեկություն, հաղորդում տալ որևէ բանի մասին** նոր նշանակությունները և այլն:

Արդի հայերենում կրկնատե բայերի գործածության հաճախականությունը, կենդանի խոսքի ու բառարանային նյութի համապատասխանության աստիճանը հնարավոր է պարզել՝ ուսումնասիրելով արևելահայերենի ազգային կորպուսի տվյալները: Համապատասխան վիճակագրությունը փաստում է, որ արդի հայերենի կրկնատե նորաբանությունները ոչ միայն աչքի չեն ընկնում գործածության բարձր հաճախականությամբ, այլև դրանց մի մասը կորպուսում առհասարակ հիշատակված չէ: Գործառական որոշակի բեռնվածությամբ առանձնանում են մոտ 20 բայեր՝ **զանգահարել** (հիշատակված է մոտ 5000 համատեքստում), **գիշերել**, **գերակշռել**, **գերհիշել** (մոտ 3000 համատեքստում), **ծափահարել** (մոտ 2000 համատեքստում), **մթազևել**, **սրտնեղել** (1000 համատեքստում), **ասմունքել**, **ներդաշնակել**, **նախազգալ** (շուրջ 500 համատեքստում), տասնյակ համատեքստերում են վկայված **ցեխոտել**, **գիշերել**, **կնճռոտել**, **թմբկահարել** բայերը և այլն: Մյուս՝ մոտ 50 բայերը արդի հայերենի բնագրային սկզբնաղբյուրներում կամ վկայված են մեկ տասնյակը չգերազանցող օրինակներով (**խնկահոտել**, **կոհակել**, **դաշնակել**, **ծածկախոտել**, **ցնորաբանել**, **արտաբուրել** և այլն), կամ ընդհանրապես հիշատակված չեն (**գարունել**, **թևահանել**, **ձայնձայնել**, **սուլսուլել** և այլն⁴³): Ակնհայտ է, որ կենդանի լեզվաորակի ուսումնասիրությունը չի կարող հենվել զուտ բառարանային նյութի վրա, քանի որ այն լավագույն դեպքում միայն մասամբ է համապատասխանում կենդանի լեզվի բառապաշարային իրականությանը:

Նորակազմ կրկնատե բայերի մի խումբը, ինչպես, օրինակ՝ *հուշարարել*, *ասմունքել*, *զանգահարել* և այլն, հատուկ լինելով չեզոք բառապաշարին, չունի ոճական կամ հուզարտահայտչական գունավորման որևէ երանգ, իսկ մյուսը բնորոշ է «գրքային» կոչվող բարձր ոճին կամ բանաստեղծական մասնաշերտին՝ **արևել**, **կոհակել**, **զանգակել**, **զեղել**, **երփնել**, **գարունել**, **ալեծփել**, **արեգակել**, **ծիածանել**, **ծափծափել**, **կոհակել**, **զեղել**, **հոգածել**, **ցնցղել**, **ներհայել**, **մտահայել**, **տարափել** և այլն: Վերջիններս գործածվում են գեղարվեստական, հռետորական կամ հրապարակախոսական ոճերում՝ խոսքին հուզականություն, վսեմություն, պատկերավորություն ու զեղեցկություն հաղորդելու նպատակով,

⁴³ Հասկացության ամբողջ ծավալով ռուսերենից պատճենվել են **զանգահարել** և **հեռախոսել** բայերը. **զանգահարել** (звонить) նբ՝ 1. **զանգ հնչեցնել**, **հեռախոսով խոսել**, չբ՝ 2. **զանգի**, **զանգահարություն ձայն հանել**, **հեռախոսել (телефонировать)**- չբ՝ 1. **հեռախոսով խոսել**, 2. **հեռախոսով մի բան հաղորդել**:

⁴⁴ Ըստ արևելահայերենի ազգային կորպուսի տվյալների՝ որոշ կրկնատե բայեր բոլորովին անգործածական են և, չնայած համապատասխան բառարաններում հիշատակված լինելուն, որևէ օրինակով վկայված չեն ժամանակակից հայերենի գրավոր աղբյուրներում, օրինակ՝ **աղերսակցել**, **թևագրոհել**, **հանկարծաբանել**, **ծեփաթափել**, **հացամթերել**, **հորդագեղել**, **նպատակամիտել**, **պայմանադրժել** և այլն: Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ խուսափել ենք վերջիններս համապատասխան ցանկերում ընդգրկելուց:

ուստի չունեն և չեն կարող ունենալ գործառական մեծ բեռնվածություն⁴⁵:

Կատարված քննությունը վկայում է, որ հայերենի զարգացման բոլոր փուլերում իրենց ակտիվությունն ու կենսունակությունը պահպանում են դասական գրաբարի կրկնատեք բայերը: Որպես համագործածական բառապաշարի բառեր՝ վերջիններս բազմաթիվ օրինակներով շարունակում են վկայվել նաև ժամանակակից հայերենի տարատեսակ գրավոր աղբյուրներում, ինչպես նաև բանավոր խոսքում⁴⁶:

3.3. Նբ//չբ կրկնատեքությունը հայերենի տարժամանակյա դիտվածքում. կրկնատեքության չեզոքացում: Կատարված վիճակագրությունը փաստում է հայերենի բայական համակարգում կրկնատեք բայերի թվի աստիճանական նվազումը (*հին հայերեն՝ շուրջ 500, միջին հայերեն՝ շուրջ 300, արդի հայերեն՝ շուրջ 200 կրկնատեք բայեր*): Եթե ասվածին հավելենք նաև գրաբար-արդի հայերեն կտրվածքում բառապաշարի գրեթե 6-ակի աճը և դրան զուգընթաց՝ կրկնատեքության ձեռք բերած կամ նորակազմ կրկնատեք բայերի անհամեմատ փոքր թվակազմը, ակնհայտ կդառնա հայերենի բայական համակարգում արձանագրված անցումը քերականական տարադժեքությունից միարժեքության՝ կրկնատեքությունից միատեքության: Կրկնատեքության չեզոքացումը, պայմանավորված լինելով լեզվի պատմական զարգացման ընդհանուր օրինաչափություններով, հայերենի զարգացման ներքին հնարավորություններով, ինչպես նաև լեզվական տարբեր միտումներով (խնայողություն, պարզեցում, միօրինակացում և այլն), նկատելիորեն կարգավորել է բայերի սեռային տարբերակման հարցը⁴⁷:

Գրաբարի բայերի կրկնատեքության չեզոքացումը:

Կրկնատեքության հատկանիշը տարժամանակյա դիտվածքում կորցրել է գրաբարի կրկնատեք բայերի շուրջ 60 տոկոսը՝ մոտ 300 բայ: Փոխանցումները հիմնականում կատարվել են երկու ուղղությամբ՝

⁴⁵ Արդի հայերենի կրկնատեք բայերի թիվը հասկանալի պատճառներով ենթակա է փոփոխությունների. հայերենի բառային կազմը շարունակաբար համալրվել և համալրվելու է նորանոր բառերով, այդ թվում՝ կրկնատեք բայերով: Հասկացության ծավալ(ներ)ի կամ խնդրառական հատկանիշների հետագա հնարավոր փոփոխությունների հետևանքով կրկնատեքություն կարող են ձեռք բերել (կամ այդ հատկանիշը կորցնել) նաև այլ բայեր, ուստի կենդանի լեզվաորակում բայերի կրկնատեքությունը պետք է դիտարկել որպես հարաբերականորեն կայուն հատկանիշ, իսկ կրկնատեք բայերի թիվը՝ փոփոխելի:

⁴⁶ Տե՛ս Յ. Չաքյան, Արդի հայերենի կրկնատեք բայերը, Գյումրի, 2019:

⁴⁷ Կրկնատեքության չեզոքացման հարցին մենք անդրադարձել ենք 2015 թ-ին՝ առանձին մենագրությամբ (*տե՛ս Յ. Չաքյան, Յին հայերենի կրկնատեք բայերը. տարժամանակյա քննություն*):

կրկնաստեռությունից չեզոք սեռ (օրինակ՝ աղմկել, արշավել, գաղթել, զգվել, կանգնել, շողորթոթել, սահել և այլն) և **կրկնաստեռությունից ներգործական սեռ** (օրինակ՝ ամփոփել, բորբոքել, գովել, խառնել, ինսայել, կուտակել, շփոթել, տատանել, փորձել և այլն): Կրկնաստեռության չեզոքացումը պայմանավորող հիմնական գործոնները երկուսն են՝ **բառիմաստի փոփոխությունը** (օրինակ՝ մոցել բայը արդի հայերենում չի պահպանել մարզել, վարժեցնել, աղմկել բայը՝ հուզել, վրդովել, աշակերտել բայը՝ կրթել, ուսուցանել նշանակությունները և այլն) և **մասնիկավորումը** (Նոր բառաձևի անջատում): Գրաբարում կրկնասեռ բայերի ներգործական սեռի նշանակությունն արդի հայերենում ունի պատճառական *-ցն*⁴⁸, իսկ չեզոք սեռի նշանակությունը՝ *-վ*⁴⁹ ածանցով ձևակազմական դրսևորում: Օրինակ՝ գրաբարում **լռել** բայն ունի ներգործական սեռի *լռել տալ*, *լռեցնել* և չեզոք սեռի *1. լուռ մնալ*, *ձայն չհանել*, *չլսելու տալ*, *2. հանդարտվել*, *կանգ առնել* նշանակությունները: Արդի հայերենում *լռել*-ը չեզոք սեռի բայ է, իսկ գրաբարյան *լռեցնել* նշանակությունն արտահայտվում է հենց *լռեցնել* բայաձևով: Նույնը պետք է ասել **արշավել**, **ցամաքել** և բազմաթիվ այլ բայերի մասին: Գրաբարում **կազդուրել** կրկնասեռ բայն ունի նր՝ *գորացնել*, *ուժեղացնել*, *ոտքի կանգնեցնել* և չր՝ *գորանալ*, *ուժեղանալ*, *սրտասկոպել*, *քաջալերվել* նշանակությունները, արդի հայերենում **կազդուրել**-ը ներգործական սեռի բայ է՝ *առողջացնել*, *ուժեղացնել*, *ապաքինել*, *գորեղացնել*, *փոխ*. ՝*քաջալերել* իմաստներով, իսկ **կազդուրվել**-ը՝ կբ/չբ և այլն:

Միջին հայերենի բայերի կրկնաստեռության չեզոքացումը:

Արդի հայերենում կրկնաստեռության հատկանիշը կորցրել է նաև միջին հայերենի կրկնասեռ բայերի մեծ մասը: Շուրջ 50 կրկնասեռ բայերի 75 տոկոսը կամ մոտ 40 բայ արդի հայերենում կրկնասեռ չէ, օրինակ՝ *գրուցել*, *ձայնել*, *զանգատ(վ)ել* բայերն ունեն միայն չեզոք, իսկ *զնդանել*, *ժողովել*, *լցնել*, *խափանել*, *փաթաթել*, *մունետիկել*, *ուժավորել*, *պարպել* բայերը՝ միայն ներգործական սեռի նշանակություններ: Կրկնաստեռության չեզոքացումը պայմանավորող գործոնները միանգամայն նույնն են՝ *իմաստափոխություն* և *մասնիկավորում*: Օրինակ՝ **մունետիկել**, **ուժավորել**, **քշտել** բայերն արդի հայերենում կորցրել են կրկնաստեռությունը պայմանավորող *հրապարակվել*, *ուժեղանալ*, *նմանություն* բերել, *դառնալ*

⁴⁸ *-Ցն* ածանցի գործադրմամբ ներգործական սեռի նշանակության արտահայտումը բնորոշ է գրաբարին (այս շրջանում կրկնասեռ բայերից շատերն ունեին գուգահեռ գործածվող *-ուցան* ածանցով տարբերակ): Հետագայում այս ածանցի գործադրումը համաբանության ուժով տարածվում է նաև նման տարբերակ չունեցող այլ բայերի վրա ևս՝ դառնալով կրկնաստեռության չեզոքացումը պայմանավորող գործոններից մեկը:

⁴⁹ *-վ* ածանցի գործադրումը և վերջինիս միջոցով ոչ միայն կրավորական, այլ նաև չեզոք սեռի իմաստ արտահայտելու միտումը բնորոշ է միջին հայերենին: Կրկնասեռ բայերի չեզոք սեռի նշանակության՝ առանձին բառաձևով արտահայտվելը ևս պայմանավորում է բազմաթիվ բայերի կրկնաստեռության չեզոքացումը:

բառիմաստները (համապատասխանաբար)⁵⁰: Այլ դեպքերում կրկնաստեռությունը պայմանավորող նշանակություններն արտահայտվում են նոր բառաձևերով (օրինակ՝ **զնդանել, արգելել, ժողվել, ծոմնել, կարգել** և այլ բայերի չեզոք սեռի նշանակություններն արդի հայերենում արտահայտվում են -վ- անանցով):

Եթե շուրջ 56000 բառ ունեցող գրաբարն ունի 500 կրկնասեռ բայ (բառային կազմի մոտ 1 տոկոսը), ապա արդի հայերենի՝ մոտ 300000 բառ ունեցող բառապաշարում կա ընդամենը 200 կրկնասեռ բայ (բառային կազմի մոտ 0,06 տոկոսը), որից 100-ը ժառանգություն է գրաբարից⁵¹: Լեզվական փաստերը վկայում են, որ հայերենի բայական համակարգում կրկնասեռության չեզոքացումը պայմանավորող գործոնները սաղմնավորվում են գրաբարում, կատարյալ արտահայտություն են ստանում արդի հայերենում, բայց հիմնականում կապված են միջին հայերենի օրինաչափությունների հետ: Հայերենի պատմական զարգացման երրորդ փուլում ուղղակի շարունակվում կամ ավարտվում է կրկնասեռության չեզոքացման գործընթացը: Շատ դեպքերում արդի հայերենին անցնում են բայերի արդեն միասեռ տարբերակները:

3.4 Կրկնասեռությունը տարժամանակյա դիտվածքում. հայերեն և ցեղակից լեզուներ: Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ աշխարհի գրեթե բոլոր լեզուներում ներկայումս արձանագրվում է կրկնասեռության տարածում և աճ՝ անկախ վերջիններիս կառուցվածքային տիպից⁵²: Կրկնասեռ բայերի թիվն աճում է ժամանակակից եվրոպական (առավել ինտենսիվ՝ ռոմանական) լեզուներում՝ ի տարբերություն նրանց հին շրջանների: Լատիներենում, հին հունարենում կրկնասեռ բայերն անհամեմատ ավելի քիչ են, քան ֆրանսերենում, իտալերենում, ժամանակակից հունարենում: Ժամանակակից գերմանական լեզուները ևս ավելի են հակված կրկնասեռության: Լույն գործընթացն է նկատվում նաև ռուսերենում և բուլղարերենում⁵³: Կրկնասեռ բայերի

⁵⁰ Տե՛ս ԱԶԲ, 532, 616, 813:

⁵¹ Ըստ Հովի. Բարսեղյանի կազմած բայացանկի՝ հայերենի բայերի թիվը (համադրական կազմություն ունեցող) հասնում է մոտավորապես 7000-ի (տե՛ս Ա. Սուքիասյան, *Ժամանակակից հայոց լեզու*, 2004, էջ 197-198): Ա. Աբաջյանը, հենվելով ժամանակակից հայոց լեզվի բառահատոր բառարանի ընձեռած կյուրթի վրա, կատարել է բայերի հաշվարկ և քարտագրել մոտավորապես 15700 բայ (ներառյալ բարբառային բառերը, հնացած ձևերը, արևմտահայերենին բնորոշ բայերը և այլն) (տե՛ս Ա. Աբաջյան, *Տեղաշարժեր արդի հայերենի բայի և խոնարհման համակարգում*, հայերենագիտության հիմնահարցեր և զարգացման հեռանկարներ (Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու) Եր., 2015, էջ 7): Ըստ այդմ՝ արդի հայերենում նը/չը կրկնասեռություն ունի բայական բառապաշարի ընդամենը 1,2 տոկոսը, այն դեպքում, երբ դասական գրաբարի շուրջ 2000 բայերից (տե՛ս Վ. Առաքելյան, *Գրաբարի քերականություն*, էջ 110-158), ըստ մեր կատարած քննության, կրկնասեռ է մոտ 250-ը, այսինքն՝ 12, 5 տոկոսը:

⁵² Տե՛ս Ա. Летуцкий, նշվ, աշխ. էջ 270-271:

⁵³ Լույն տեղում, էջ 269:

թվի մեծացման հետ փոխվում և ընդլայնվում են վերջիններիս թեմատիկ-իմաստային խմբերը: Դա հատկապես լավ է երևում լատիներենի և իտալերենի, լատիներենի և ֆրանսերենի, հին հունարենի և Նոր հունարենի համեմատության մեջ⁵⁴: Ուշագրավ է այն հանգամանքը, որ Նույնիսկ քերականական համապատասխան ձևի առկայությունը խոչընդոտ չի դառնում կրկնասեռության ձևավորման համար (ինչպես, օրինակ, բուլղարերենում⁵⁵): Լեզվաբաններին հետաքրքրում է երկու հիմնական հարց. ինչպես է Նախապես անցողական կամ անանցողական բայը դառնում կրկնասեռ, և ինչպես է կոնկրետ բայերի կառավարման մոդելի փոփոխությունը բերում ամբողջ համակարգի փոփոխության: Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ պատմականորեն կրկնասեռությունը կարող է ձևավորվել ամենատարբեր ճանապարհներով՝ ընդգրկելով լեզվական տարբեր մակարդակներ⁵⁶:

Լեզուներում կրկնասեռ բայերի թվի աճի ավելի մեծ հավանականությունը ուսումնասիրողները բացատրում են նրանով, որ քերականական այդ հատկանիշը կարող են ձեռք բերել թե՛ Նախապես անցողական, թե՛ անանցողական բայերը: Ինչպես նկատում է Ա. Լետուչիը. «Ընդհանուր առմամբ եթե լեզուն պահպանում է բառը, ապա վերջինիս գործածությունը սովորաբար ընդլայնվում է և ոչ թե նվազում, ուրեմն կրկնասեռ բայերի ձևավորումը ավելի արագ է կատարվում, քան հակառակ գործընթացը»⁵⁷: Վերջինի գոյությունը լեզվաբանը համարում է հնարավոր, բայց խիստ հազվադեպ պատահող. նման օրինակ տալիս է հին վեդայերենը միջին վեդայերենի համեմատությամբ⁵⁸: Մեր կատարած քննությունը վկայում է, որ հայերենի բայական համակարգում լավագույնս արտացոլվում է հենց այդ հակառակ ընթացքը՝ կրկնասեռության չեզոքացում և Նորակազմ

⁵⁴ Օրինակ՝ հին հունարենում կրկնասեռ էին հիմնականում շարժում արտահայտող փոքրաթիվ բայեր՝ *ballō-ներել-ներել*, *bainō-գնալ-տանել*, և այլն: Նոր հունարենում, վերջիններիս թվի զգալի աճին զուգընթաց, ընդլայնվել է նաև իմաստային շրջանակը՝ *ksiprō- արթնանալ-արթնացնել*, *alazō - փոխել-փոխվել*, *aniyō-բացել-բացվել*, *klinō-փակել-փակվել* և այլն (տե՛ս **Haspelmath M.** *More on the typology of inchoative / causative verb alternations* // *Comrie B., Polinsky M. (eds). Causatives and Transitivity. Amsterdam; Philadelphia: John Benjamins, 1993* (տե՛ս **А. Петучий**, նշվ. աշխ. էջ 270):

⁵⁵Տե՛ս **А. Петучий**, նշվ. աշխ., էջ 271:

⁵⁶ Օրինակ՝ Ֆ. Վիսսերը և Լ. Կուլիկովը անգլերենում և գերմաներենում կրկնասեռ բայերի թվի աճը կապում են հնչյունական գործընթացների հետ, բուլղարերենում կրկնասեռության ձևավորումը լեզվաբանները պայմանավորում են բառակազմական օրինաչափություններով և, իհարկե, կարևորում են շարահյուսական գործընթացները, քանի որ դրանցում արտահայտվում են բայերի վալենտականությունների փոփոխությունները (տե՛ս **F. Visser** Th. *A historical syntax of the English language. Pt. I. Syntactical units with one verb. Leiden: Brill, 1970* **L. Kulikov** I. *Passive, anticausative and classification of verbs. The case of Vedic* // *Kulikov V., Vater H. (eds). Typology of verbal categories. Papers presented to V. P. Nedjalkov on the occasion of his 70th birthday. Tübingen, 1998*, **А. Петучий**, նշվ. աշխ, էջ 284):

⁵⁷ Նույն տեղում, էջ 273:

⁵⁸ **L. Kulikov**, I. *The Labile Syntactic Type in a Diachronic Perspective: the Case of Vedic* // *SKY Journal of Linguistics. 2003. 16.* (տե՛ս **А. Петучий**, նշվ. աշխ, էջ 275):

կրկնասեռ բայերի, բայական կրկնասեռ նորաբանությունների թվի նվազում: Տարժամանակյա կտրվածքում հայերենի և ժամանակակից եվրոպական լեզուների բայական համակարգերում արձանագրվել են ոչ այնքան տարբեր, որքան տրամագծորեն հակառակ գործընթացներ՝ մի կողմից՝ կրկնասեռ բայերի թվի նվազում, մյուս կողմից՝ աճ: Խոսքը ոչ թե մի քանի տասնյակ բայերի քերականական հատկանիշների, այլ համակարգային փոփոխությունների մասին է⁵⁹:

Անդրադառնալով արդի լեզվաբանական տիպաբանությանը բնորոշ համաժամանակյա և տարժամանակյա ուսումնասիրությունների անհավասարակշռությանը⁶⁰ Լ. Կուլիկովը առաջարկում է սկսել 1000 և ավելի տարվա պատմություն ունեցող լեզուների տիպաբանական տարժամանակյա ուսումնասիրություններ լեզվական նյութերի հավաքումից և կազմել տվյալ լեզվաընտանիքի կամ լեզվախմբի տարժամանակյա տիպաբանական նկարագիր՝ սկսելով նախալեզվից և հասնելով արդի լեզվաորակներին⁶¹:

Ըստ կրկնասեռության տարժամանակյա զարգացման առանձնահատկությունների՝ Լ. Կուլիկովը հնդեվրոպական լեզուները բաժանում է Էվոյուցիոն երկու տիպի⁶²՝ հնդեվրոպական տարածքի (արեալի) արևմտյան մասի լեզուներ (գերմանական, սլավոնական և ռոմանական լեզուների մեծ մասը և այլն) և հնդեվրոպական տարածքի (արեալի) արևելյան մասի լեզուներ (հնդարիական լեզուներ, հայերեն և այլն)՝ առաջինն տալով *համադրական (սինկրետիկ)*, իսկ երկրորդին՝ *հակահամադրական (անտիսինկրետիկ) տիպ* անվանումները: Այս տարբերակումը լեզվաբանը հիմնավորում է նրանով, որ առաջին խմբի լեզուները հնդեվրոպական նախալեզվի հասարակ սեռի համադրականության հին ցուցիչը փոխարինել են նորով, իսկ երկրորդ խմբի լեզուները լիովին հրաժարվել են համադրականությունից (սինկրետիզմից) և մշակել հատուկ

⁵⁹ Այս հանգամանքն ընդգծում է հայերենի ինքնատիպությունը, բայց ոչ բացառիկությունը: Վեդայերենի համանման փաստերի արձանագրումը վկայում է, որ տարժամանակյա այլ ուսումնասիրություններ կարող են բացահայտել զարգացման նշված ուղղությունն անցած այլ լեզուներ ևս:

⁶⁰ Լ. Կուլիկովը նկատում է. «Մի կողմից լեզվաբաններն իրենց տրամադրության տակ ունեն աշխարհի տարբեր լեզուների բայական համակարգերի, սեռի և քերականական այլ կարգերի համաժամանակյա մանրակրկիտ վերլուծություններ, մյուս կողմից՝ այս կարգերի համակարգված ուսումնասիրություններ տարժամանակյա զարգացման տեսանկյունից չկան: Այս կարգերի առաջացումը, զարգացումը և անհետացումը տիպաբանական ուսումնասիրություններում հիմնականում մղված են երկրորդական պլան» (տե՛ս Լ. **Куликов, Залози и залоговые категории в индоарийском и праиндоевропейском, к диахроническо-типологическому портрету глагольной системы ведийского санскрита**, Индоевропейское языкознание и классическая филология, 2014, էջ 528): Այս առումով նա իրենայական է համարում նախալեզվի հնդարիական ճյուղը, որն ունի գրավոր տեքստերով վկայված 3000-ամյա պատմություն և հետահայաց տարժամանակյա քննություն կատարելու հնարավորություն է տալիս: Կարծում ենք՝ հայերենի՝ մեր կողմից կատարված տարժամանակյա քննության արդյունքները ևս կարող են ծառայել նման նախածեռնության իրականացմանը՝ նոր նյութեր տրամադրելով ինչպես հայագիտությանը, այնպես էլ հնդեվրոպաբանությանը:

⁶¹ Լ. **Куликов**, նշվ. հոդված, էջ 529:

⁶² Նույն տեղը, էջ 548:

ցուցիչներ՝ տարբեր սեռերի նշանակություններ արտահայտելու համար (հնդեվրոպական հասարակ սեռը այս լեզուներում անհետացել է)⁶³: Հեղինակն ըստ էության խոսում է հնդեվրոպական հասիալեզվից ցեղակից լեզուներին անցած կրկնասեռության հատկանիշի պահպանման կամ կորստի մասին՝ դրանով հակադրելով արևմտյան և արևելյան արեալների լեզուները: Ակնհայտ է, որ հայերենի բայական համակարգում կրկնասեռության չեզոքացումը պայմանավորող գործոնները տարժամանակյա կտրվածքում կարող էին արձանագրվել են նաև ցեղակից այլ լեզուներում՝ հանգեցնելով նույն արդյունքին:

Անդրադառնալով այսպես կոչված «անկայուն (լաբի) շարահյուսությանը» և ելնելով հնդարիական տեքստերի շարահյուսական տարժամանակյա քննության արդյունքներից՝ Լ. Կուլիկովը հաստատում է, որ հնդեվրոպական արևելյան արեալի՝ կրկնասեռության բարձր մակարդակով հատկանշվող որոշ հնագույն լեզուներ պատմական զարգացման ընթացքում կորցնում են այդ հատկանիշը⁶⁴: Ասվածից հետևում է, որ հայերենի և եվրոպական ժամանակակից լեզուների տարժամանակյա զարգացման ուղղությունների վերոհիշյալ հակադրությունը պայմանավորված է հնդեվրոպական ցեղակից լեզուների եվոլյուցիոն երկու տիպերի զարգացման առանձնահատկություններով (հիարկե, նման պնդումը կարող է հաստատել հնդիրանական լեզվախմբի տարժամանակյա լիակատար քննությունը):

Հետաքրքրական է մեկ այլ հանգամանք ևս. ինչպես վերևում նշել ենք, հայերենին բնորոշ են նաև ոչ ցեղակից լեզուներին հատուկ օրինաչափություններ: Լ. Կուլիկովը նկատում է, որ արևելյան խմբի լեզուները, ի տարբերություն արևմտյան խմբի լեզուների, ընդհանրություններ ունեն նաև ոչ հնդեվրոպական լեզվաընտանիքների լեզուների հետ, և ընդգծում, որ սա առանձին լուրջ խնդիր է⁶⁵: Կարծում ենք, հայերենի առումով այդ «առանձին լուրջ խնդիրը» պետք է պայմանավորել վերջինիս առանձնահատուկ բնույթով: Թեև հայերենը ավանդաբար պատկանում է հնդեվրոպական տարածքի արևելյան ճյուղին⁶⁶, սակայն ունի բազմաթիվ առանձնահատկություններ, որոնք, ըստ հայ և օտարագի բազմաթիվ լեզվաբանների, հայերենը կապում են հնդեվրոպական բարբառների ավելի լայն խմբի⁶⁷, գերմաներենի, կելտերենի⁶⁸, բայթիկ-

⁶³ Հեղինակն ընդգծում է, որ հայերենում այս առումով արդյունավետությամբ աչքի է ընկնում –ուցան- պատճառական ածանցը (տե՛ս նույն տեղը, էջ 549):

⁶⁴ Լ. Куликов, նշվ. հոդված, էջ 542:

⁶⁵ Կարծում ենք՝ խոսքը վերաբերում է լեզուների նոստրատիկ ցեղակցությանը:

⁶⁶ Յ. Туманян, *Ареальная характеристика армянского языка* (Древнеармянский язык, М. 1971, էջ 6-8)

⁶⁷ Յ. Макаев, «Армяно-индоевропейские лексические изоглоссы и ареальная лингвистика» см. Zeitschrift fuer Phonetik, Sprachwissenschaft und Kommunikationsforschung-Bd. 20, H. 5\6 Berlin 1967]

⁶⁸ Յ. Макаев, *Армяно-кельтские изоглоссы. Кельты и кельтские языки*. М., 1974. С. 52 – 54.] G. Solta. *Die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen*. Wien, 1960 s.479-480.

սլավոնական լեզուների հետ⁶⁹: Ե. Մականը, վերլուծելով կատարված ուսումնասիրությունների արդյունքները, գալիս է այն հետևության, որ հայերենի՝ հնդեվրոպական տարբեր լեզուների հետ ունեցած ընդհանրությունները շատ ավելի մեծ թիվ են կազմում, քան զուտ հայերենին հատուկ լեզվական իրողությունները, ինչը հստակ ցույց է տալիս հայոց լեզվի կենտրոնական դիրքը (հեղինակն ընդգծում է այս միտքը) հնդեվրոպական այլ լեզուների շարքում⁷⁰: Լեզվաբանը նշում է, որ հայերենը, գոնե իր բառապաշարի առումով, կամրջում է արիական և բալթիկ-սլավոնական լեզուները, հունարենից հասնում մինչև իտալերեն, կելտական և գերմաներեն լեզուները⁷¹: Նույն միտքն է արտահայտում նաև Գ. Ջահուկյանը՝ նկատելով, որ հայերենի բարբառային հիմքը միջին դիրք է զբաղեցնում հնդեվրոպական բարբառների միջև՝ ավելի սերտ կապեր ունենալով մի կողմից՝ իրանական, իսկ մյուս կողմից՝ հունական և փյուռգիական լեզուների հետ⁷²:

Ատենախոսության **եզրակացություններն** ամփոփված են հետևյալ կետերում՝

1. Զերականական տարարժեքությունը, բնորոշ լինելով հնդեվրոպական նախալեզվին, հատուկ է նաև հայերենին: Նրա արտահայտություններից մեկը կրկնասեռությունն է՝ բայերի հասկացության ծավալների շրջանակներում քերականական տարբեր սեռերի իմաստների համատեղումը (անվանական համակարգում քերականական տարարժեքությունն արտահայտվում է խոսքիմասային տարարժեքությամբ): Կրկնասեռության տեսակները, ձևաիմաստային դրսևորման եղանակները կարող են փոփոխվել՝ ըստ տարբեր լեզուների կամ ըստ լեզվի զարգացման տարբեր փուլերի օրինաչափությունների:

2. Նբ//չբ (ներգործական և չեզոք սեռերի իմաստների համատեղմամբ արտահայտվող) կրկնասեռությունը, ի տարբերություն մյուս տեսակների (ներգործական // կրավորական, կրավորական // չեզոք, ներգործական // կրավորական // չեզոք և այլն), հատուկ է հայերենի բայական համակարգին զարգացման բոլոր փուլերում:

3. Հայերենն ունի կրկնասեռ բայերի երկու տեսակ՝ **սեռային տեղաշարժերի հետևանքով կրկնասեռ դարձած բայեր և սկզբնաձևային կրկնասեռությունն ունեցող բայեր:**

⁶⁹ Л. Сараджева, Балто-армяно-славянские и балто-армянские параллели в лексико-семантической группе «части тела и их функции», Baltistica, XIII (1), 1987, էջ 23-27:

⁷⁰ Э. Макаев, նշվ. աշխ., էջ 455:

⁷¹ Նույն տեղը, էջ 456:

⁷² Г. Джаукян, Очерки по истории дописьменного периода армянского языка. Ереван, 1967, էջ 46-47:

Համաժամանակյա կտրվածքում բոլոր բայերի կրկնասեռությունը սկզբնաձևային է, իսկ տարժամանակյա կտրվածքում առանձնացվում են սկզբնաձևային կրկնասեռությունն ունեցող և սեռային տեղաշարժերի հետևանքով կրկնասեռ դարձած բայերը:

4. Կրկնասեռ բայերի խնդրառության տիրույթում առկա է նվազագույնը երկու մասնակադապար՝ մեկ կամ երկու պարտադիր մասնակիցներով՝ ակտանտներով (գործոր): Կադապարներից մեկն առաջադրում է ուղիղ խնդրի պահանջ, իսկ մյուսը բացառում է այդ պահանջը:

5. Կատարված քննությունը վկայում է, որ հին հայերենն ունի շուրջ 500 կրկնասեռ բայեր, որոնցից մոտ 250-ը արձանագրված են դասական գրաբարի բնագրային սկզբնաղբյուրներում: Այս բայերի ձևախմբատային առանձնահատկությունները և ոճական-գործառական հատկանիշները պատկերացում են տալիս հայերենի բայական համակարգում կրկնասեռության իմաստային-գործառական դրսևորումների նախնական վիճակի մասին, ուստի հենց այս շերտը պետք է դիտարկել հայերենի կրկնասեռ բայերի պատմական ժառանգություն և համեմատության եզր՝ տարժամանակյա փոփոխությունները բացահայտելու և մեկնաբանելու առումով:

6. Հին հայերենի կրկնասեռ բայերը հիմնականում բազմիմաստ են: Ներգործական և չեզոք սեռերի նշանակությունները կամ տարբեր բայիմաստներ են (արդի լեզվամտածողությամբ երբեմն անհամատեղելի), կամ ցույց են տալիս նույն գործողությունը՝ հակադարձ ուղղվածությամբ: Նրանք ենթադրաբար կարող էին ունենալ ինչպես գործածության հաճախականության, այնպես էլ ոճական տարբերություններ՝ պայմանավորված օտար լեզուների ազդեցությամբ, օրինակ՝ հունաբանությամբ:

7. Հին հայերենի կրկնասեռ բայերը կարող են ընդգրկվել թեմատիկ-իմաստային ամենատարբեր խմբերում, հիմնականում հատուկ են համագործածական բառապաշարին և ունեն գործառական մեծ բեռնվածություն:

8. Ըստ մեր կատարած հաշվեքննության՝ միջին հայերենն ունի շուրջ 300 կրկնասեռ բայեր, որոնք ներկայանում են երկու շերտով՝ *գրաբարյան ժառանգության շերտ* (մոտ 250 բայ) և *միջինհայերենյան կրկնասեռ բայեր* (մոտ 50 բայ)՝ միջին հայերենում կրկնասեռ դարձած կամ *տարժամանակյա կրկնասեռ բայեր* (մոտ 30) և բուն միջինհայերենյան կամ *համաժամանակյա կրկնասեռ բայեր* (մոտ 20):

9. Միջին հայերենի համաժամանակյա կրկնասեռ բայերը իմաստային-գործառական դրսևորումների առումով գրաբարի համեմատ ունեն էական տարբերություններ. չեն հատկանշվում

իմաստային լայն ընդգրկումներով և, հատուկ լինելով խոսակցական և բարբառային մասնաշերտերին, ունեն գործածության շատ ավելի նեղ շրջանակ:

10. Արդի հայերենը, ըստ մեր կատարած վիճակագրության, ունի շուրջ 200 կրկնասեր բայեր, որոնք, ըստ պատմական աղբյուրների, ներկայանում են երեք շերտով՝ գրաբարյան ժառանգության շերտ (շուրջ 100 բայ), միջինհայերենյան ժառանգության շերտ (10 բայ), արդիհայերենյան կրկնասեր բայեր (մոտ 100 բայ)՝ արդի հայերենում կրկնասեր դարձած կամ տարժամանակյա կրկնասեր բայեր (մոտ 30) և բուն արդիհայերենյան կամ համաժամանակյա կրկնասեր բայեր (մոտ 70 բայ):

11. Արդի հայերենի նորակազմ կրկնասեր բայերը գերազանցապես բնորոշ են գրքային բառապաշարին (գեղարվեստական կամ <<բարձր>> ոճին), ուստի չունեն գործածության լայն շրջանակներ:

12. Արևելահայերենի ազգային կորպուսի տվյալների ուսումնասիրության հիման վրա կատարված վիճակագրությունը փաստում է, որ արդի հայերենի կրկնասեր բայերը ոչ միայն աչքի չեն ընկնում գործածության բարձր հաճախականությամբ (գործառական որոշակի բեռնվածություն ունեն մոտ 20 նորակազմ բայեր), այլև դրանց մի մասը կորպուսում առհասարակ հիշատակված չէ:

13. Հայերենի զարգացման բոլոր փուլերում կրկնասեր բայերի ամենաակտիվ և կենսունակ շերտը շարունակում է մնալ պատմական կամ գրաբարյան ժառանգության շերտը:

14. Կրկնասեր բայերի ոճական, իմաստային-գործառական դրսևորումների և վիճակագրական տվյալների տարժամանակյա փոփոխությունների առումով հայերենը տարբերվում է ցեղակից այլ լեզուներից: Եթե ռուսերենում, անգլերենում, ֆրանսերենում, գերմաներենում, հունարենում և բազմաթիվ այլ լեզուներում զարգացման նախորդ շրջանների համեմատ կրկնասեր բայերի թիվը շեշտակիորեն աճել է, փոխվել է կրկնասեր բայերի իմաստային դաշտը, ընդլայնվել են թեմատիկ-իմաստային խմբերը, ապա հայերենում կատարվել են տրամագծորեն հակառակ գործընթացներ:

15. Կրկնասերության՝ տարժամանակյա դիտվածքում արձանագրված չեզոքացման հետևանքով կրկնասեր բայերի թիվը հայերենում անշեղորեն նվազել է. եթե գրաբարի շուրջ 56000 միավոր բառային կազմում առկա է 500 կրկնասեր բայ, ապա արդի հայերենի՝ մոտ 300000 բառ պարունակող բառապաշարում կա ընդամենը 200 կրկնասեր բայ, որից 100-ը ժառանգություն է գրաբարից:

16. Հին հայերենի՝ համագործածական բառապաշարն ընդգրկող հարյուրավոր կրկնասեր բայերի դիմաց միջին և արդի հայերեններն ունեն բառապաշարի միայն որոշ մասնաշերտերի հատուկ նորակազմ կրկնասեր բայերի անհամեմատ փոքր թվակազմ:

17. Հայերենի՝ ցեղակից լեզուներին բնորոշ ընդհանուր օրինաչափություններից շեղվելը կարող է պայմանավորված լինել հնդեվրոպական լեզուների արևմտյան և արևելյան արեալների (տարածքների) տարժամանակյա զարգացման առանձնահատկություններով:

18. Կրկնասերության դրսևորման տարաբնույթ իրողությունների առկայությունը հայերենում հաստատում է վերջինիս ինքնատիպությունը՝ պայմանավորված մի կողմից՝ հնդեվրոպական լեզուների միջև ունեցած որոշակի միջակա դիրքով, մյուս կողմից՝ ոչ ցեղակից լեզուների հետ ունեցած ընդհանրություններով:

19. Ուսումնասիրությունն արձանագրել է տարժամանակյա այլ փոփոխություններ ևս. կրկնասերությունը գրաբարում և միջին հայերենում ունի ձևային դրսևորման երկու եղանակ՝ համադրական կրկնասերություն (բայական մեկ բառույթով) և սեռային զուգահեռություն (ե//ի քերականական լծորդափոխությամբ), իսկ արդի հայերենում արտահայտվում է բացառապես համադրական եղանակով:

20. Լեզվի տարժամանակյա դիտվածքում փոխվել է կրկնասեր բայերի սկզբնահիմքերի կազմությունը. գրաբարյան և միջինհայերենյան ծագմամբ կրկնասեր բայերը բացարձակ մեծամասնությամբ ունեն արմատական սկզբնահիմք, իսկ արդի հայերենի կրկնասեր բայական նորաբանությունները գերազանցապես բաղադրյալ սերող հիմքերով բայեր են:

21. Տարժամանակյա կտրվածքում Եակևնորեն փոխվել է ածանցավոր կազմությունների վիճակագրությունը. գրաբարում և միջին հայերենում ածանցավոր կրկնասեր բայերը փոքրաթիվ են, իսկ արդի հայերենում նրանց թիվն աճում է՝ հիմնականում ի հաշիվ պատճառական ածանցով կազմությունների:

«Հավելվածներ» բաժնում, որն ընդգրկում է 7 հավելված, ներկայացվում են հարակից նյութեր՝ հետդասական գրաբարի կրկնասեր բայերի քննությունը՝ ներառյալ գրաբար-հին հունարեն զուգադրական քննության արդյունքները, արդի հայերենի կրկնասեր բայերի գրաբարյան ժառանգության հնացած շերտը, արդի հայերենյան բառարաններում արձանագրված բարբառային կրկնասեր բայերը, կբ//չբ կրկնասերությունն ունեցող բայերը, աղյուսակներ, վիճակագրական տվյալներ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

Մենագրություններ`

1. Հին հայերենի կրկնասեռ բայերը. տարժամանակյա քննություն, 2015, Գյումրի, «Էլդորադո» հրատ. , 218 էջ⁷³:
2. Միջին հայերենի կրկնասեռ բայերը, 2016, Գյումրի, «Էլդորադո» հրատ. , 124 էջ:
3. Արդի հայերենի կրկնասեռ բայերը, 2019, Գյումրի, «Էլդորադո» հրատ. , 226 էջ:

Հոդվածներ`

1. **Բայերի սեռային փոխանցումները հայերենի պատմական զարգացման մեջ**, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», 2004, հ.7, էջ 106-112:
2. **Գրաբարի բայերի պարզ և ածանցավոր զուգահեռ ձևերը ժամանակակից հայերենում**, ԳՊՄԻ Հանրապետական գիտական ստաշրջանի կյուլթեր, 2005, էջ 134-138:
3. **Կրկնասեռությունն արդի հայերենի բայական համակարգում**, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», 2008, հ. 11, էջ 129-135:
4. **Արդիհայերենյան կրկնասեռ բայերն ըստ կազմության և գործառության**, ԳՊՄԻ Հանրապետական գիտական ստաշրջանի կյուլթեր, 2011, էջ 22-25:
5. **Բայածանցումը` կրկնասեռության չեզոքացման գործոն**, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», 2011, էջ 68-72:
6. **Կրկնասեռության ըմբռնումը 17-18-րդ դարերի լատինատիպ քերականություններում**, «Պատմամշակութային ժառանգություն և արդիականություն» միջազգային գիտաժողով. ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», 2013, էջ 145-151:

⁷³ Գրախոսությունը` **Գ. Մխիթարյան**, Հ. Չաքյանի «Հին հայերենի կրկնասեռ բայերը. տարժամանակյա քննություն» գիրքը, «Հայագիտական հանդես», Եր, 2016, թիվ 2, էջ 176-180:

7. **Երկր սեռային զուգահեռություն ունեցող բայերը Աստվածաշնչում**, Հայագիտական հանդես, 2014, 4 (28), էջ 42-49:
8. **Կրկնասեռության ըմբռնումը 17-18-րդ դարերի լատինաստիպ քերականություններում**, Պատմաբանասիրական հանդես, 2014, 3 (197), էջ 184-194:
9. **Связь между сопряжением, спряжением и двойственным залогом глагола в грабаре (древнеармянском языке)**, «*Eastern European Scientific Journal*», 2015 № 2 (175-183)
10. **Ա լծորդության կրկնասեռ բայերը գրաբարում**, Հայագիտական հանդես, Ե., 2015, 1 (29), էջ 3-13:
11. **Ե լծորդության պարզ բայահիմքով կրկնասեռ բայերը Աստվածաշնչում**, Հայագիտական հանդես, Ե., 2015, 2 (30), էջ 3-15:
12. **Աստվածաշնչի կրկնասեռ բայերի պատմական զարգացումը**, «Մխիթար Գոշ», Եր., 2015, 2, էջ 198-203:
13. **Կրկնասեռ բայերի գրաբարյան ժառանգությունը միջին հայերենում**, Բանբեր հայագիտության, 2016, 2 (11), էջ 140-149:
14. **Միջին հայերենի կրկնասեռ բայերը գրաբար-միջին հայերեն ժամանակահատվածում**, Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Ա պրակ, 2016, էջ 35-43:
15. **Ե լծորդության ոչ բայական (բառակազմական) ածանց ունեցող սկզբնահիմքով բայերը գրաբարում**, Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի գիտական տեղեկագիր (Բ պրակ), 2016, էջ 10-19:
16. **Двойственный залог, образованный совмещением активного и нейтрального залога (երկր), в системе армянского языка. Типы и способы выражения**, Филологические науки. Вопросы теории и практики ISSN 1997-2911, 2017, 11 (77) часть 2, 71-76,
17. **Արդի հայերենի կրկնասեռ բայերը**, «Լեզու և լեզվաբանություն», 1 (16), 2017, էջ 72-80:
18. **Արդի հայերենի կրկնասեռ բայական նորաբանությունները**, «Լեզու և լեզվաբանություն», 1 (18), 2018, էջ 82-94:
19. **Արդի հայերենի կրկնասեռ բայերի գրաբարյան շերտը**, «Բանբեր Երևանի համալսարանի», 2018 № 3 (27), էջ 62-72:
20. **Արդի հայերենի բարբառային կրկնասեռ բառերը**, Լրաբեր հասարակական գիտությունների, 2018 № 3, էջ 225-234:
21. **Смысловое калькирование-основа формирования двузалоговости. Древнеармянские и древнегреческие**

языковые взаимосвязи, *Eastern European Scientific Journal*, 2019, №5:

22. **Диахроническое развитие действительной\нейтральной двузалоговости в глагольной системе армянского языка. Нейтрализация двузалоговости.** *Филологические науки. Вопросы теории и практики* ISSN 1997-2911, 2020, № 13 (10), էջ 276-281:
23. **Диахронические изменения статистических и стилистикофункциональных характеристик армянских двузалоговых глаголов,** Теоретическая и прикладная лингвистика, Выпуск 8, № 3, 2022, էջ 90-100:
24. **Unlocking the Mystery of Dual-Voiced Verbs: A Comparative Study in English and Armenian,** *World Journal of English Language* SSN 1925-0703, E-ISSN 1925-0711, 2025, Vol 15, № 3 (համահեղինակ՝ ք. գ. դ. , պրոֆ. Ա. Հովհաննիսյան), հղում՝ <https://www.sciedupress.com/journal/index.php/wjel/article/view/27131/16688>)

ГРАНУШ СУРЕНОВНА ЗАКЯН

**СЕМАНТИКО-ФУНКЦИОНАЛЬНЫЕ ПРОЯВЛЕНИЯ
ДВУЗАЛОГОВОСТИ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ**

Диссертация на соискание ученой степени доктора филологических наук по специальности 10. 02. 01- “Армянский язык”

Защита состоится на заседании специализированного совета КВОН РА 019 по специальности “Лингвистика” действующего в Институте языка им. Р. Ачаряна НАН РА

адрес: Ереван 0015, ул. Григора Лусаворича 1

РЕЗЮМЕ

Работа посвящена исследованию двузалоговых глаголов трех периодов исторического развития армянского языка. Исследование на основе диахронических лингвистических фактов армянского языка в значительной степени раскрывает и описывает историческое развитие и семантико-функциональные проявления двузалоговости в армянской глагольной системе, описывая как с синхронной и с диахронической точек зрения, так и в сравнении с родственными языками.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и приложений.

В первой главе (“Семантико-функциональные проявления двузалоговости в древнеармянском языке”) представлено исследование около 500 двузалоговых глаголов древнеармянского языка, около 250 из которых зафиксированы в первоисточниках классического габара. Древнеармянские двузалоговые глаголы в большинстве своем многозначны, в основном специфичны для софункциональной лексики и имеют высокую функциональную нагрузку.

Во второй главе (“Семантико-функциональные проявления двузалоговости в среднеармянском языке”) представлено исследование около 300 двузалоговых глаголов среднеармянского языка, около 250 из которых заимствованы из габара. Около 50 двузалоговых глаголов среднеармянского языка претерпели значительные семантико-функциональные изменения по сравнению с габаром. Они уже не имеют широкого спектра значений, будучи специфичными для разговорной и диалектной речи, имеют гораздо более узкий диапазон употребления.

В третьей главе (“Семантико-функциональные проявления двузалоговости в современном армянском языке”) представлено исследование около 200 двузалоговых глаголов современного армянского языка, около 100 из которых заимствованы из Габара, а 10- из среднеармянского языка.

Около 70 новообразованных двузалоговых глаголов современного армянского языка характерны для «высокого» стиля, поэтому не имеют и не могут иметь широкого спектра употребления. Статистические данные, основанные на изучении данных национального корпуса восточноармянского языка, доказывают, что данные глаголы не только не выделяются высокой частотностью употребления, но и некоторые из них вообще не упоминаются в национальном корпусе армянского языка.

Наше исследование доказывает, что в стилистических, семантико-функциональных проявлениях и статистических данных двузалоговых глаголов в армянской глагольной системе произошли существенные изменения. вместе с нейтрализацией двузалоговости со временем уменьшилось и количество двузалоговых неологизмов, в отличие от родственных языков, в которых семантическое поле двузалоговых глаголов меняется вместе с ростом и распространением двузалоговых глаголов, расширяются тематико-семантические группы.

HRANUSH S. ZAKYAN

**SEMANTIC-FUNCTIONAL MANIFESTATIONS OF BIVALOCALITY
IN THE ARMENIAN LANGUAGE**

The thesis is submitted to claim the degree of Doctor of Philological Sciences

(10.02.02 - “the Armenian Language”)

The thesis defence session will be held on

.....

at the session of Specialised Council on Linguistics 019 HESC in

Hrachya Acharyan Institute of Language of the National

Academy of Sciences of the Republic of Armenia

(address: 15 Grigor Lusavorich Street, 0015 Yerevan).

SUMMARY

The work is devoted to the study of two-voice verbs of three periods of the historical development of the Armenian language. The study, based on

diachronic linguistic facts of the Armenian language, largely reveals and describes the historical development and semantic-functional manifestations of the duality of the Armenian verb system, describing it from both a synchronic and diachronic point of view, as well as in comparison with related languages.

Describes the historical development and semantic-functional manifestations of the duality of the Armenian verb system, describing it from both a synchronic and diachronic point of view, as well as in comparison with related languages.

Chapter I (“Semantic and functional manifestations of two-voice in the ancient Armenian language”) presents a study of about 500 two-voice verbs of the ancient Armenian language, about 250 of which are recorded in the primary sources of the classical grabar. The majority of ancient Armenian two-voice verbs are polysemantic, mainly specific to co-functional vocabulary and have a high functional load.

Chapter II (“Semantic and functional manifestations of two-voice in Middle Armenian”) presents a study of about 300 two-voice verbs of Middle Armenian, about 250 of which are borrowed from Grabar. About 50 two-voice verbs of the Middle Armenian language have undergone significant semantic and functional changes compared to Grabar. They no longer have a wide range of meanings, being specific to colloquial and dialectal speech, and have a much narrower range of use.

Chapter III (“Semantic and functional manifestations of two-voice in modern Armenian”) presents a study of about 200 two-voice verbs of the modern Armenian language, about 100 of which are borrowed from Grabar, and 10 from Middle Armenian. About 70 newly formed two-voice verbs of the modern Armenian language are characteristic of the "high" style, therefore they do not have and cannot have a wide range of use. Statistical data based on the study of data from the national corpus of the Eastern Armenian language, prove that these verbs not only do not stand out for their high frequency of use, but some of them are not mentioned at all in the national corpus of the Armenian language. Our study proves that significant changes have occurred in the stylistic, semantic-functional manifestations and statistical data of two-voice verbs in the Armenian verbal system. Along with the neutralization of two-voice, the number of two-voice neologisms has also decreased over time, unlike related languages, in which the semantic field of two-voice verbs changes along with the growth and spread of two-voice verbs, thematic-semantic groups expand.



